

Արքայի աշխատանքի կենց. գույշական  
ՀԽՍՀ նախագահի

Երևան, 7 դեկտ. 1980թ.

**Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ**

# **ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍԵՑԻ**

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

(Արտասպուած ՍԻՈՆ ամսագրի 1980 և 1981 թթ. համարներից)



**ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ**

**ԵՐՈՒՍԱՂԵՄ**

**1981**



A III  
5023

Յ. ԱՆԱՍԵԱՆ

# ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՎՈՏԵՑԻ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

(Արտապուած Սի՛ն ամսագրի 1980 և 1981 թթ. համարներից)

2014-80



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ  
ԵՐՈՒՍԱՂԵՑ

1981



# ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍԵՑԻ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՆՈՐ ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ)

Սրանից ուղիղ 25 տարիներ առաջ, 1956 թուականին, հրատարակել էինք մեր «Դիտութիւններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան վերաբերեալ» յօդուածը («Էջմիածին» ամսագիր, 1956, № 8-9 և 11-12), որում հայոց այդ նշանաւոր հայրապետի կեանքին ու գործունէութեանը վերաբերող սակաւաթիւ աղբիւրների օդտագործմամբ ու քննական վերաբերութեան ուղիով առաջ էինք քաշել մի շարք հարցեր։ Մեր եղբակացութիւնները յանգում էին հիմնականում երկու կէտերի։ 1. Ստեփանոս Սալմասեցին 1551 կամ 1552 թուականներին չի մահացել Լուսվում, այլ յիշատակուում է ինչպէս 50-ական, այնպէս եւ 60-ական թուականներին։ 2. Լուսվի հայոց մայր տաճարում զժնուող եւ երա անունը կրող «տապահաբան» ու արձանագրութիւնը կեղծ են։

Մեր այդ յօդուածը առիթ էր տուել, որ Հռոմի Լեռնեան վարժարանի սաներից գերյ. Գրիգոր վրդ. Պետրովիչը նոյն հարցերին նուիրուած՝ հայերէն մի ուսումնասիրութեամբ, որը կրում էր «Ստեփանոս» և Սալմաստեցի, կաթողիկոս էջմիածնի խորագիրը, հանդէս գար նախ «Բաղմավէպ» ամսագրի 1962-1963 թթ. համարներում (յետոյ նաև առանձին գրքով՝ Վենետիկ, 1964), իսկ աւելի ուշ՝ անդրագառնար նաև իր «Հայ Եկեղեցին Լեհաստանում» իտալերէն աշխատութեան մէջ (Հռոմ, 1971)։

Պէտք է ասել, որ Սալմաստեցու կապակցութեամբ Գրիգոր վրդ. Պետրովիչի կատարած աշխատանքը, անկախ իր ներկայացրած գաղափարական զարտուղութիւնից, շատ նշանակալից ու կարևոր ներդրում էր Ստեփանոս Սալմաստեցուն նուիրուած ուսումնասիրութիւնների բնագաւառում։ Պետրովիչը հրապարակ էր գալիս օտարալեզու այնպիսի աղբիւրներով, որոնք ուշագրութիւն էին գրաւում թէ՛ իրենց քանակով եւ թէ՛ մեզ հետաքրքրով հարցերի վերաբերեալ պարունակած նոր նիւթերով ու լուսաբանով նոր տուեաներով։ Արպէս մասնագէտ՝ մենք մեծ հաճոյքով դիմաւորեցինք այդ երեւոյթը, նկատի ունենալով, որ Ստեփանոս Սալմաստեցու ուսումնասիրումը, որպէս առարկայ, կապուած է լեհական-լատինական միջավայրի հետ եւ հետեւարար Պետրովիչի նշած լեհերէն եւ լատիներէն աղբիւրներն ու մենագրութիւնները անսահմանօրէն կարեւոր նշանակութիւն ունեն այս գործում։ Այդ ժամանակներից՝ մենք հետամուտ ենք եղել ամէն զնով ձեռք բերելու այդ նոր նիւթերը, որոնումներ կատարելով մեծ կենտրոններում՝ Մասկուայում, Լենինգրադում, Հռոմում, Լոս Անջելոսում, ու Երուալակմում, ինչպէս նաև միջգրադարանային կապերի միջոցով Լուսվում, Կիեվում եւ այլ վայրերում։ Եւ մեզ յաջողուել է բաւական բան ձեռք բերել այդ միջոցներով։ Պետրովիչի հրատարակութիւնների շնորհիւ է, որ նոր ուղիներ են յայտնուել մեզ՝ մեր հետազօտութիւնների համար։

Յատուկ շնորհակալութեամբ այստեղ յայտնենք, որ Գրիգոր վրդ. Պետրովիչը 1978 թ. գարնանը Հռոմում մեծ սիրալիքութեամբ օժանդակից մեզ՝ կապեր ստեղծելու տեղի գիտական հաստատութիւնների հետ, ինչպէս, օրինակ, լեհաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հռոմի կայանի հետ, ինչպէս եւ բարութիւնն ունեցաւ իր հաւաքած անտիպ նիւթերից մեզ նուիրելու մի կարեւոր էջ՝ լատիներէն բնագրի լուսանկարով եւ իր կողմից կատարուած վերծանմամբ ու իտալերէն թարգմանութեամբ (Bibliotheca Vaticana, Cod. Vat. Lat. № 12561, որ է J. E. Minasowicz-ի «Memorabilia» աշխատութիւնը)։

Տարիների ընթացքում հաւաքուած նիւթերի հիման վրայ՝ մենք գրում ենք Ստեփանոս Սալմաստեցուն նուիրուած համապարփակ մի ուսումնասիրութիւն, որի տարբեր մասերից այսօր, որպէս նմուշ, հրատարակութեան ենք տալիս մի քանի առանձին հատուածներ, որոնք անմիջական կապ չունեն իրար հետ։

Ստորև օգտագործում ենք հետեւեալ երկու յապաւառմները։

ՊԱՍ = Գրիգոր Վրդ. Պետրովիչ։ Ստեփանոս և Սալմասեցի, Կաքողիկոս Էջմիածնի (1543-1552)։ Վենետիկ, 1964։

PChA = Gregorio Petrowicz. La Chiesa Armena in Polonia. Parte prima 1350-1624. Istituto degli Studi Ecclesiastici, Roma, 1971.

## ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ

Յայտնի է, որ Ստեփանոս Սալմաստեցին Արեւելեան Հայաստանի մելիքների յանձնաբարական նամակներով, որոնք ուղղաւոծ էին Հռոմի պապին և Արեւմուտքի մի քանի քրիստոնեաց պետութիւններին, անցնում է Եւրոպա՝ Հայաստանի ազատագրման համար օժանդակութիւն ապահովելու յոյսով։ Այդ կարծիքին է նաև Պետրովիչը<sup>1</sup>։ Մեր տարակարծութիւնը նրա հետ ըստ երեսոյթին կայանում է իր նպատակների իրագործման համար Սալմաստեցու ձեռք տած միջոցների գնահատման մէջ։

Սալմաստեցին դիւանագիտական բանակցութիւնների մէջ էր մասնում Հռոմի և Եւրոպական կոթողիկ իշխանութիւնների հետ և հասկանալի է, որ, եթէ նրանցից օգնութիւն էր խնդրում, ինքն էլ պիտի տրամադրութիւն ցոյց տար ինչ որ բանով ու չափով փոխադարձութիւն անելու կամ խոստանալու, եւ դա՝ մի եկեղեցու գերագոյն պետի համար չէր կարող լինել այլ բան, քան զիջումներ անել կամ խոստանալ՝ կրօնական հարցերի բնագավառում։

Եւ, ահա, մենք տեսնում ենք, որ դիւանագիտական այդպիսի հաշիւններով է, որ Սալմաստեցին 1548/1549 թուականներին յանկարծ յայտնուում է Հռոմում՝ ցնցող տպաւորութիւն գործելով այդ միջավայրում։

Յայտնի մտաւորական Պ. Պ. Գ. Արեւինոսը գրում է, որ հայոց կաթողիկոս Ստեփանոսը «Հռոմ եկաւ 1548 թուականին եւ հպատակութիւն յայտնեց Պօղոս Գպապին ու իր դաւանութիւնը տուից համաձայն այն դաւանանքի, որը սահմանուած էր Փլորենտեան ժողովում՝ Եւգինիոս Դ-ի ժամանակ»<sup>2</sup>։ Իսկ Վատիկաննեան դիւանի մի վաերագրի համաձայն՝ 1549 թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցած կարգինալական նիստում (Consistorium) խօսուում է այն մասին, թէ վերջերս Հռոմ էր ժամանել մի հայ պատրիարք՝ տրամադրութիւն ցոյց տալով հնագանդութիւն յայտնել Նորին Սրբութեանը եւ Հռոմէական Ս. Եկեղեցուն, խնդրելով, որ ժողովրդի կողմից իր անձի որպէս հայոց պատրիարք կատարուած ընտրութիւնը հաստատուի Նորին Սրբութեան կողմից» եւ թէ երեք կարգինալների յանձնաբարուում է ուսումնասիրել այս հարցը՝ «խորհելու համար, թէ ի՞նչ կայ անելու եւ Նորին Սրբութեանը տեղեկացնելու»<sup>3</sup>։

Միամտութիւն կը լինէր, սոկայն, կարծել, թէ հայոց ազգային եկեղեցու գիտապետ Ստեփանոս Սալմաստեցին մինչեւ հեռաւոր Հռոմ հասնելու յոգնութիւնը յանձն էր առել պարզապէս նրա համար, որ կամաւորապէս Լատինական Եկեղեցուն նուիրաբերէր իր դարաւոր անկախ եկեղեցին, և ընդունէր նրա գահակալի հպատակութիւնը։ Եթէ նա խօսում էր այդպիսի՝ տարապայմանօրէն խոշոր զոհողութեան մասին, այն էլ մի ամբողջ ժողովրդի անունից, դա չէր լինի տանց ակնկալութիւնների եւ տունց երկկողմանի ու հաւասար պայմանների։ Եթէ մենք ընդունում ենք, որ Սալմաստեցու այս ուղեւորութեան շարժառիթը հայկական հարցն էր, ինչպէս ընդունում է եւ Պետրովիչը, եւ նա պաշտօն ունէր այդ մասին բանակցութիւններ կատարելու Հռոմում, տպա միաժամանակ պիտի ընդունենք, որ նմանօրինակ բանակցութիւնները միակողմանի պայմաններով չեն, որ կարող էին կատարուել։ Քաղա-

<sup>1</sup> ՊՍՍ Էջ 11 եւ շաբ.։

<sup>2</sup> Steph.-Evod. Assemanus, «Bibliothecae Mediceae Laurentianae et Palatinae codicum mss. orientalium catalogus», Florentiae, 1742, p. 60.

<sup>3</sup> Archivum Secretum Vaticanum, Ac a Consistorialia incipientia ab anno 1537, tempore Pontificatus s. m. Pauli Papae III, per totum annum 1550, sub Julio Papa III, p. 1035, 1042-1043. տես O. Raynaldus, «Annales ecclesiastici», Lucae, 1755, ad annum 1549, № 35. Հմմա. ՊՍՍ Էջ 17. PChA p. 91.

քական ու գիւտագիտական աշխարհում բանակցութիւնները աննպատակ, հետեւս-  
բար՝ ձրի, չեն լինում երբեք կաղմերը առաւել կամ նուազ չափով պահանջներ են  
ներկայացնում եւ իւրաքանչիւր կողմ աշխատում է նուազագոյն զիջման փոխարէն  
ձեռք բերել առաւելագոյն շահ: Պէտք է ա'յս տեսանկիւնից նոյնի նաեւ այս բանակ-  
ցութիւնների վրայ:

Ստեփանոս Սալմասանցին, իր Հռոմ հասնելու օրուանից, շլացուցիչ յայտա-  
րարութիւններ էր արել պապին հնագանդուելու և Հայ Եկեղեցին լատինականին  
հնթարկելու իմաստով: Բայց նմանօրինակ գործերը լոկ յայտարարութիւններով չէ,  
որ լինում են: Այդ յայտարարութիւնների իրացման ճանապարհի վրայ կային եր-  
կու ուրոյն հանգրուաններ: Առաջինն այն էր, որ բանակցող կաթողիկոսը ինքն ան-  
ձամբ համաձայնութեան եղբեր գտնէր Լատինական Եկեղեցու ներկայացուցիչների  
հետ: իսկ երկրորդն այն էր, որ նա, իր երկիրը վերագառնալով, իր գլխաւորած  
Եկեղեցու հաւանութիւնն ու համաձայնութիւնը ապահովէր Հռոմում իր կատարած  
բանակցութիւնների արդիւնքների հիման վրայ:

Այս հաշուավ՝ Հռոմում Սալմասանցու կատարած բանակցութիւնները գեռ  
կրում էին հախնական ու պայմանական, եւ բոլոր գէպքերում՝ անհատական, բնոյթ:  
Այդ բանակցութիւնների համար էտկան նշանակութիւն ունեցող կէտերից մէկը պապի  
հանդէպ նրա անձնական հպատակութեան (ապագայի առումով) արտայայտութիւնն  
էր, որ նո կարող էր կատարել նոյնիսկ առանց իր Եկեղեցու պաշտօնական հաւանու-  
թեան, եւ նա կատարել էր այդ, որպէսզի բացուէր բանակցութիւնների գուռը: Այդ-  
պիսի նշանակութիւն ունեցող կէտերից մէկն էր նաև դաւանական հարցը եւ հայոց  
կաթողիկոսը կարող էր գրանում եւս չզգալ որեւէ կաշկանդուածութիւն, քանի որ  
գուռանականի էութիւնը հիմնականում ամփոփուած էր երկու եկեղեցիներում ըն-  
դունուած Նիկիական հանգանակի սահմաններում: իսկ երկու ընութեան վարդապե-  
տութեան հարցում, որին այնքան մեծ նշանակութիւն էին տալիս Հռոմում, Սալ-  
մասանցին կարող էր անայլայլօրէն յայտարարել, թէ Հայ Եկեղեցին արդէն միշտ էլ  
գուռանում էր Քրիստոսի մէջ շանխառն և անշփոթ միացմամբ» երկու բնութիւն<sup>4</sup>:  
Սալմասանցին իր այս յայտարարութիւններով Հայ Եկեղեցու համար պարտադիր  
յանձնառութիւններ չէր սահղուած: բայց դրանք, ի հարկէ, լատինական կողմի համար  
ունէին առաջնակարգ նշանակութիւն և վատարկանը, բանակցութիւնների այսպիսի  
սկզբնաւորութեամբ բաւարարուած, իր կողմից առաջին քայլն էր անում հայկական  
կողմի պահանջներին ընդառաջելու ուղղութեամբ: Յուլիոս Գ պապը 1550 թ. ապրիլ  
25 թուագրուած յանձնարարական երկու նամակներ է յանձնում Սալմասանցուն,  
նամակներ՝ ուղղուած Գերմանիայի կարոլոս և կայսրին եւ Լեհաստանի Սիգիսմոնդ  
Բ Աւգոստոս թագաւորին: այդ երկու նամակներում, որոնք նոյն բովանդակութեամբ  
էին, պապը նրանց յանձնարարում էր լսել հայոց կաթողիկոսի խնդրանքը<sup>5</sup>:

Այսքանը, սակայն, բանակցութիւնների համար առաջին հանգրուանն էր  
կազմում:

Երկրորդ հանգրուանի համար գուները բաց էին թողնուած Սալմասանցու կող-

<sup>4</sup> Այս մասին տեսնել մեր յօդուածը՝ «Ներսէս Շնորհալին եւ Արմատ Հաւատոյ ժողովա-  
ծուն», Էջմիածին, 1973, № 12, էջ 84-85:

Բեն. Հերքեսարը, որ շատ մօտիկից է ծանօթ եղել Լեհաստանի հայերին եւ նրանց կրօ-  
նական ըմբռնումներին, 1566 թուականին գրում էր, թէ Շնորհանց քահանաների հետ ունեցած  
խօսակցութիւններից չկարողացանք հասկանալ ուրիշ բան, քան այն, որ հայերը, թէեւ տար-  
բեր ծէսով, մեզ հետ դաւանում են նոյն հաւատը, «վերջապէս տեսանք նրանց հաւատոյ  
դաւանութիւնը եւ նրանում չպատահեցինք որեւէ բանի, որը լինէր նուազ ուղիղ: հաւատի  
կողմից հայերը միաբան են մեզ հետ եւ իրենք իսկ ընդունում են այդ» (տես B. Herbest,  
«Wypisanie drogi», MLUR, vol. 5, p. 4-8. Հմմտ. PChA p. 148-149):

<sup>5</sup> Archivum Secretum Vaticanum, Minutae Brevium Iulii PP. III, Arm. 41, t. 55, № 363. Հմմտ.  
ՊՍՍ էջ 21. PChA p. 93 և 108 (լուսապատճէնը):

մից Վերջինս, Հռոմում պապի տռջեւ իր յարգալիր խոնարհումը ըստ պատշաճի կտարելուց եւ երկու եկեղեցիների դաւանական նոյնութեան կամ ձայնակցութեան մասին հաւաստիք տալուց յետոյ, մնացածը թողնում էր տռկախ. մնացածի մասին կարելի կը լինէր խօսել միտյն այն ժամանակ, երբ իրական յոյսեր կ'երեւային հայկան հարցի համար, Գերմանիայի եւ Լեհաստանի այցելութիւններից յետոյ, Եւ, իրօք, Հռոմում Սալմաստեցին ձեռնպահ է մնում Հայ Եկեղեցու անունով զիջումներ անելու կէտում: Նրանից պահանջուհի էր ջուր խառնել պատարագի բաժակի մէջ, բայց նա վազոմֆամ էր համարել այդ պահանջը՝ տսելով, թէ այդ հարցը պատկանում է բանակցութիւնների հետագայ հանդրուանին: «Եւ որովհետեւ, — զրում է Արեափնուը, — նա պատարագի խորհրդի մէջ ջուր չէր խառնում գինու հետ, համաձայնուեց, որ ինչպէս ինքը, այնպէս եւ իրեն ենթակայ 27 եպիսկոպոսները հետագայում գինու հետ ջուր կը խառնեն՝ ըստ սովորութեան Հռոմէական Եկեղեցուց<sup>6</sup>: Արեափնուը յետոյ աւելացնում է. «Յազմաթիւ եւ ծանր եղան մեր միջև վիճաբանութիւնները՝ կրօնական հարցերի շուրջ» (plura fuerunt et gravia, quae de religione inter nos disservimus)<sup>7</sup>: Այս խօսքերի թարգմանութեան հարցում մենք հետեւում ենք Հ. Մ. Զամշեանին, որը ճիշտ է<sup>8</sup>: Պետրովիչը յարմար է համարել՝ մեղմել Արեափնուի այս խօսքերի իմաստը եւ այդ նպատակով, մերժելով Զամշեանի թարգմանութիւնը, ինքը թարգմանել է այսպէս. «Յազմաթիւ եւ լուրջ եղան մեր խօսակցութիւնները կրօնքի վերաբերեալ հարցերու շուրջ»<sup>9</sup>:

Այս բոլորն ասում են, որ Հռոմում Սալմաստեցին հանդէս էր եկել ո՛չ որպէս անվերապահ եւ միակողմանի զիջումներով ընթացող բանագնաց: Մեզ թուում է, սակայն, որ Պետրովիչը վերոյիշեալ փաստերից իր հանած եղբակացութիւններով համաձայն չէ մեզ հետ: Նա հեց սկզբում ընդունել է, որ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու ծրագիրն է, որ Սալմաստեցուն տարել էր դէպի եւրոպա. բայց իրերի ընթացքի գնահատման մէջ մոռանում է այդ հիմնականը եւ իր ամբողջ փաստարկումներն ուղղում է այն նպատակին, որ ապացուցի, թէ նա, Սալմաստեցին, անկեղծօրէն եւ անվերապահօրէն անձնատուր էր եղել Հռոմի աթուրին եւ ցան անձնուիրաբար ծառայել նրա պահանջներին ու շահերին: Պետրովիչն իր ընդհանուր եղբակացութիւնների մէջ տսում է, որ Սալմաստեցին «հետեւելով իր փառապահ նախորդների հետքերուն մեծ բարեպաշտութեան եւ կաթողիկէ սովի նշաններ ու վաւերագիրներ տուաւ մինչ հոս կը զանուէր», ինչպէս կ'ըսէր Յուլիոս Գ պապը<sup>10</sup>, Բատ մեզ՝ ամէն հասկացողութիւն յարաբերական է: «Կաթողիկէ (ընդհանրական) սովի նշաններ ու վաւերագիրներ (ապացոյցներ)» տալը Հայաստանեաց Եկեղեցու պետի ցուցաբերած քրիստոնէական սիրոյ եւ համերաշխութեան սովին էր, քրիստոնէական ըմբռնումների ընդհանրութեան սովու անկեղծ արտայայտութիւնն էր: Իսկ սրանից գուրս արգեօք դեռ ի՞նչ կարող էր հասկանաւ Պետրովիչը. անպայման ու միտյն հնագանդութիւն եւ հպատակութիւն: Բայց Պետրովիչը դեռ աւելացնում է հետեւեալը. «Ստեփանոս Ե. Կոտորդուն կաթողիկէ մը ըլլուր փաստը տուաւ Հռոմի շրջանակէն դուրսն ալ, այն է Լեհաստանի հայոց տոջեւ»<sup>11</sup>. Իսկ այս խօսքն էլ ակնարկութիւն է Լուսվում ուկրաինացի յունոգաւան երկու երեխաների հետ կապուած մի պատմութեան, բայց այդ էլ, դարձեալ, ուրիշ հարց է. ոչ թէ հասկացողութիւնների յարաբերականութեան հարց, այլ սոսկ թիւրիմացութիւն, եթէ չենք ուզում անել՝ պատմական փաստերի կամաւոր աղաւաղաւմ:

<sup>6</sup> S. - E. Assemanus, p. 60.

<sup>7</sup> Ibidem.

<sup>8</sup> Հ. Մ. Զամշեան, «Պատմութիւն Հայոց», հառ. Գ, Վենեաիկ, 1786, էջ 518:

<sup>9</sup> ՊՍ էջ 16 եւ 28:

<sup>10</sup> Անդ, էջ 108:

<sup>11</sup> Անդ:

## ՍՏԵՓԱՆՈՍ ՍՊԱԾԱԾԵՑԻՆ ԵՒ ՅՈՒՆԱԴԱՒԱՆԵՐԻ ՄԿՐՏՄԱՆ ԽՆԴԻԲԸ

Պետրովիչը, Սալմաստեցու եռանգուն հասմէտկան լինելուն սրպէս ապացոյց, առաջ է բերում մի տեղեկութիւն, որի համաձայն նո, Սալմաստեցին, 1551 թուականին ուկրաինացի յունադաւաւներից խլել էր երկու տղայ՝ որպէս թէ «կաթողիկէ դաւանանքի գործնելու նպատակով»<sup>12</sup>: Այս տեղեկութեան համար Պետրովիչը որպէս տղբիւր է ցոյց տալիս «Լուսվի գատական վճիռների ժողովածուա-ի Ժ հատորը»<sup>13</sup> և նրա հեղինակութիւնն ոմբազնդելու համար վկայակոչում է նաեւ մեր օրերի մի ուսումնասիրութիւնն<sup>14</sup>, որի աղբիւրը, սակայն, հենց նոյն «Լուսվի գատական վճիռների ժողովածուա-ի նոյն Ժ հատորն է, ուրեմն՝ անարժէք:

Իր տարօրինակութեամբ անխուսափելիօրէն թերահաւատութիւն ներշնչող այս տեղեկութիւնը մեզ մզեց լծուելու՝ ցոյց տրուզ տղբիւրների ստուգման աշխատանքին, որից եւ պարզուեց, որ «Լուսվի գատական վճիռների ժողովածուա-ի Ժ հատորը վճիռների բնագրեր չեն հրատարակուել, այլ միայն վաւերագրերի ցուցակները լիներէն լիզուով՝ նրանց բովանդակութիւնը յայտնող համառօտ տեղեկութիւններով»: Հատորի 60-րդ էջի վրայ գտնուում է ցուցակի № 906 նկարագրութիւնը, որը վերաբերում է երկու տղաների խնդիրը շօշափող վաւերագրին: Ահա այդ նկարագրութեան հայերէն թարգմանութիւնը:

«906. Կրտկովում, 19 մայիսի 1551 թ., լինաց թագաւոր Սիգիսմոնդ Աւգոստոսը՝ Լուսվի հայոց պատրիարք Սաեփանոսին, որպէսզի նա իրենց մօ'րը վերադարձնի յունադաւան այն երկու տղաներին, որ նա խլել էր կաթոլիկ գաւանանքին դարձնելու համար»:

Այս ծանօթագրութեան վերջում նշուում է, որ նկարագրուող անտիպ վաւերագրիրը, որը լատիներէն է, գտնուում է Լուսվի Բեռնարդինեան կոչուոծ դիւանատան (Archivum Bernardinum) Լուսվեան ամբոցի դիւանում (Archivum Castri Leopoliensis), հատոր 328, էջ 666–667:

Ուրեմն՝ այս վաւերագրիրը Սիգիսմոնդ Բ Աւգոստոսի մի նամակն է, գրուած 1551 թուականի մայիսի 19-ին, նամակ, որով նա Սալմաստեցուն յանձնաբարում է յունադաւան համայնքին վերադարձնել յիշեալ տղաներին: Բայց Պետրովիչն, իրեն յատուկ նկատառուով, հայ ընթերցողին ցոյց չի տալիս բուն՝ արքայական վաւերագրիրը<sup>15</sup> և միայն հատագոյում է, որ լատին ընթերցողի համար ամբողջութեամբ հրատարակում է նրա լատիներէն բնագիրը<sup>16</sup>: Իսկ այդազից ի՞նչ է պարզուում մեզ համար:

Նամակն տոսւմ է, որ յունադաւանների՝ Հալիչի, Լուսվի եւ կամենիցի առաջնորդ Արսէն Բալաբանի և Լուսվի արեւելեան ծէսով հայերի պատրիարք Սաեփանոսի (Stepan patriarcha ritus orientalis Armenorum civitatis Leopoliensis) միջև վէճ էր առաջացել «յունական մկրտութիւնից հայկականի դարձուած ինչ-որ տղաների խնդրով» (occasione quorundam puerorum in baptismum Armeniorum ex graeco translatorum), այսինքն՝ իրեւ հայ վերամկրտուած տղաների խնդրով, ինդիր, որն ընկել էր թագաւորի իրաւարարութեանը, և վերջինա Սաեփանոսին գրում էր, թէ այդ տղաներն իրենց հարազատ մօրից խլւելով «մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [իւ] օծուել են ձեր ծէսով» (in fidem ritus vestri armenici transtulissent baptismo [ac] juxta ritum vestrum unxissent).<sup>17</sup>

<sup>12</sup> Ա. Ա. 44 էջ 108: PChA p. 97 և 101:

<sup>13</sup> "Akta Grodzkie i Ziemske", t. X, Lwów, 1884, str. 60, № 906.

<sup>14</sup> K. Chodynicki, «Kościół prawosławny a Rzeczpospolita Polska; Zarys historyczny 1370–1632», Warszawa, 1934, str. 93.

<sup>15</sup> Հմատ. ՊՍՍ էջ 44:

<sup>16</sup> PChA p. 97–98.

<sup>17</sup> Բնագրի այս մասն ամբողջութեամբ բերենք, որպէս զի աւելի պարզ լինի ընթերցողի համար: "Exponi fecit nobis venerabilis Arsenius Balaban Haliciensis, Leopoliensis, Camenecensisque vla-

Տեսնում ենք, որ այստեղ «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» խնդիր չկայ, այլ պարզապէս՝ «հայտաւան դարձնելու». եւ, իրօք, «ուրիշ ի՞նչ կարող է նշանակել ահայկական ծէսի դաւանանք» արտայայտութիւնը, եթէ ոչ հայդաւանուրիւն: Իսկ «կաթոլիկ դաւանանքին դարձնել» խօսքը դանուում է այն № 906 լեներէն նկարագրութեան մէջ, որ ժաղավածուի կազմող-խմբագրողը նուրիել է արքայական այդլատիներէն վաւերագրին: Նշանակում է՝ ժողովածուն կազմողի շարագրած տեղեկութիւնը, որ Պետրովիչը մեղ ներկայացրել էր որպէս պատմական ազրիւր, չի համապատասխանում Սիդիսմոնդ Աւգոստոսի նամակի բովանդակութեանը: Ուստի եւ այսուղ, իրաւամբ, կարելի է ընդհանրապէս հարց դնել, թէ, ճշգրտութեան առումավ, արդեօք որքանո՞վ են վատանելի այս ժողովածուի լեներէն գրուած ծանօթագրութիւնները: Իսկ այդ մասին Պետրովիչն ինքն արդէն յայտնել էր իր կարծիքը, երբ մեր նոյն Սոլմաստեցուն վերաբերող մի ուրիշ՝ 19 դեկտ. 1550 թուտկիր թագաւորական վաւերագրի մասին էր խօսում, ասելով, թէ այնտեղ պատմական վճիռներու խմբագրիրը լաւ հասկցած չէ վերոյիշեալ արքայական առանձնաշնորհումին բուն իմաստը<sup>18</sup> կամ, ինչպէս իր իտալերէն հրատարակութեան մէջ էր կրկնում Պետրովիչը, «կազմողը չի հասկացել խնդրոյ առարկայ արքայական արտօնագրի իմաստը<sup>19</sup>, եւ իր թէ՛ հայերէն, թէ՛ իտալերէն հրատարակութիւններում ամբողջութեամբ բերում էր իսկական վաւերագրիրը՝ իր այս կարծիքը հաստատելու համար: Իսկ ներկայ դէպքում Պետրովիչն ինչո՞ւ է փութիսութեամբ առաջ քաշում կազմողի «կաթոլիկ դաւանանքին դարձնելու նպատակով» խօսքը, երբ գիտի, որ դա՛ էլ սխոլ է, եւ զլանում է հայ ընթերցողին ներկայացնել բուն վաւերագրիրը, «որի պատճէնն իր ձեռքի տակ է եւ որը տեսանելի կը դարձնէր այդ սխոլը:

Առաջ դնանք մի քայլ եւս:

Պետրովիչը տիրապետում է լատիներէն լիգուին, բայց տուեալ գէպքում ժաղովածուի կազմողին չի առարկել, թէ լատիներէն ritus բառը նշանակում է ոչ թէ դաւանանք, այլ ծես: ընդհակառակն՝ լուլեայն հաւանութիւն է տուել, որովհետեւ դայտարմար է «կաթոլիկ դաւանանքին դարձնելու» համար: Սակայն տեսնում ենք, որ Պետրովիչը, բուն վաւերագրիրը քննելիս, ուզեցել է ritus բառը հատկանալ նրա իսկական՝ ծես իմաստով եւ Armeni ritus orientalis (Կուեւելեան ծեսով հայեր) անուտն տոկ հասկանալ լատինագրաւան հայեր, որոնք արեւելեան (հայկական, ազգային) ծեսով եին վարուում, որպէս թէ ի տարբերութիւն այն լատինագրաւան հայերի, որոնք թողել էին ազգայինը եւ վարուում եին արեւելեան (լատինական) ծեսով: Իսկ այս ձեւով՝ Լուովի հայերը երկու գէպքում էլ գուրս կը գային որպէս լատինագրաւան: Ինչպէս երեւում է, այսպիսի ելակէտով է, որ Պետրովիչն ուզում է արքարացի ցայց առ ժողովածուի կազմողին, որպէսզի Լուովի արեւելեան ծեսով հայերի (իմա՞ լատինագրաւանների) պատրիարք Սոլմաստեցին կարաղանայ հանգէս գալ յունագրաւան երեխաներին իբր թէ լատինագրաւան դարձնող:

Աւելորդ է ասել, որ այսպիսի մօսեցումը քննագրատառթեան չէր գիմանայ, քանի որ, ինչպէս ի պատմութենէ գիտենք, Լուովի արեւելեան ծեսով հայերը լատինագրաւան չէին, այլ հայտագրաւան. այդպէս էր գրութիւնը մինչեւ 1630-ական թուտ-

dica quod tempore nuper transacto Dominatio Tua, seu officialis Illius in spiritualibus, in civitate Leopolensi, certos quosdam pueros duos sexus masculini fidei graecae, in minorenitate existentes, ab illorum legitima matre violenter rapisset ac in fidem vestri armenici transtulissent baptismō [ac] iuxta ritum vestrum unxiſſent” (Պետրովոյ Արսէն Բալաբանը, որը Հալիչի, Լուովի եւ Կամենիցի առաջնորդն է, մեղ տեղեկագրեց, որ վերջերս թու Տէրութիւնը, եւ կամ Լուով քաղաքում հոգեւոր գործերի գծով նրա պաշտօնատարը, իրենց հարազատ մօրից բռնի խլել է արական սեռի երկու անչափահաս երեխաների, որոնք յունական դաւանանքին են պատկանում, եւ նրանք մկրտութեամբ ձեր հայկական ծէսի դաւանանքին են դարձուել [եւ] օծուել են ձեր ծէսով):

<sup>18</sup> ՊՍՍ էջ 32:

<sup>19</sup> РChA p. 96. իսկ ձեռագրի լուսապատճէնը՝ 181:

կոնսերը, երբ սկիզբ առան հայերի բռնի կաթոլիկացման ձևոնարկումները: Իսկ մինչեւ այդ՝ եթէ լինահայ գաղութում պատահում էին լտափնագաւանութեան յարած անհատներ, նրանց ո՛չ հայ անունն էին տալիս, ո՛չ էլ անուանում էին արեւելեան ծեսով եւ կամ արեւմտեան ծեսով: Հենց Պետրովիչի կողմից վկայակոչուած լտափնական այնպիսի աղքաղիւրներում, որոնք խօսում են Առովի հայերի գործերի մասին, գեռեւս ԺԴ գորի երկրորդ կէսում հայ տոելով հատկանում էին միայն հայագաւաններին: այդ աղքաղիւրների ընձեռած փառակրի հիմոն վրայ Պետրովիչն ինքը, մի տյլ առիթով, գտնում էր, որ «կարողիկեալ տերմինը գործել էր լատին-ի համանիշ: իսկ հոյ տերմինն՝ իմաստավ նոյն էր գործել ներձուածող տերմինի հետ», եւ մարդիկ այդ անում էին, ինչպէս եղբակացնում է նոյն Պետրովիչը: Վյուճախ չփոթելով տարբեր ծէսերը տարբեր գոււանանքների հետ<sup>20</sup>:

Բայց թողնենք Պետրովիչի մօտեցման եղանակների հարցը: Մասնագէտներին յայտնի է, որ լտափնական աղքաղիւրներն Armeni ritus orientalis (արեւելեան ծեսով հայլեւ) կամ պարզապէս Armeni orientales (արեւելեան հայլեւ) անուանումով միշտ հառկանում են հայագաւան հայերին, որոնց ի առքիւրութիւն, լտափնագաւաններին անուանում են Արմենի մասունք նոյն էր գործել ներձուածող տերմինի հետ», եւ մարդիկ այդ անում էին, ինչպէս տեսնում ենք, օրինակ, հատկանակ աշխատութեան վերնագրում: D. Dan, «Die orientalischen Armenier in der Bukowina», Czernowitz, 1890<sup>21</sup>: Այս գիրքը նուիրուած է Յուկավինայի հայագաւան հայերի ուսումնասիրմանը:

Դուցէ անհրաժեշտ է նաեւ յիշել, որ այսպիսի խնդիրներում Հռոմէական եկեղեցու տեսանկիւնից կայ նաեւ կանոնականութեան հարց: «Կաթողիկեայ հանրագիտարան»-ում, օրինակ, մկրտութեան հարցերին նուիրուած յօդուածը բացայայտորէն տում է, որ արեւելեան եկեղեցիների մատակարարած մկրտութիւններն անպայման վուերական են եւ կրկնելի չեն<sup>22</sup>: Նոյն հանրագիտարանի մի ուրիշ յօդուածում, ուր «Քրիստոնէական Արեւելք» հասկացութիւնն է պարզաբանուած, ասուում է, որ արեւելեան եկեղեցիներից էին Բիւզանդականը եւ նրանից ծագոծ եկեղեցիները, իթիւ որոնց՝ ոլուսնականը (ռուսներ, ուկրաինացիներ եւայլն)՝<sup>23</sup>, որոնց բոլորին յունագաւան էին անուանում:

Արգ՝ որքանո՞վ կարելի է հաւատալի համարել, թէ «Եռանդուն կաթողիկէ» Ստեփանոս Սալմասանցին, Հռոմէական եկեղեցուն ծառայութիւն մատուցելու համար, սանակոխ անէր նրա ունեցած կանոնական կարգերը, այն էլ հենց նոյն եկեղեցու բացարձակ իշխանութեան սահմաններում գտնուող Լինաստանում: Եթէ որեւէ մէկը ուզենար կաթոլիկ գործնել այդ տղաներին՝ մկրտութեան հարց արդէն չկար յունագաւանների համար: Մեզ թուում է, որ բաւական է այսքանը:

Այսպիսով՝ անտարակուսելի է, որ Սալմասանցին, լինելով հայոց կաթողիկոս, փարձ էր կատարել յունագաւան ուկրաինացի երեխաններին հայագաւան հայ գործներու եւ ոչ թէ, որպէս լատինական եկեղեցու գործիչ, նրանց կարողիկ գործներու ինչպէս ներկայացնում է Պետրովիչը՝ օգտուելով «Առովիչի գատական վճիռների ժողովածուածն կազմողի տղիտարած կատարած սխալից»:

<sup>20</sup> РChА p. 16.

<sup>21</sup> Այս գիրքը թարգմանուած է հայերէն: Գեմետրիոս Տան (Դան), «Արեւելեան Հայք ի Պարքովինա» (թարգմ. Հ. Գրիգորիս Գալեմքեարեան), Վիեննա, 1891:

<sup>22</sup> "Encyclopedie Cattolica", vol. II, Città del Vaticano, 1949, p. 1045.

<sup>23</sup> Ibidem, vol. IX, 1952, p. 309–310.

## ՍՏԵՓԱՆՈՍ ՍՊԱՄԱՍՏԵՅՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

**Մեր «Դիտողութիւններ» յօդուածի կարեւոր կէտերից մէկն էր Ստեփանոս Սալմաստեցու մահուան թուականի հարցը:**

Սալմաստեցու մահուան թուականը որոնելու հարցում, ինչպէս տեսել էինք, կարեւոր նշանակութիւն ունէին Առաքել Դաւրիժեցու հաղորդած տուեալները, որոնց համաձայն Սալմաստեցին դեռ կենդանի էր 1557 թուականին: Դաւրիժեցու տուեալների արժանահաւատաւութիւնը Սալմաստեցու շրջանի կաթողիկոսների ժամանակագրական հարցերում՝ վեր է ամէն կատածից, որովհետեւ դրանք հիմուած են ձեռագրերի յիշատակարանների վրայ: Նու իր «Պատմութեան» մէջ յիշատակուած այս կամ այն դէպքի թուականները նշելիս՝ կարող է, իր ձեռքի տակ եղած աղբիւրների վրայ յենուելով, սխալուել բայց այստեղ՝ խնդիրն այլ է: Զեռագրերի յիշատակարանների վրայ յենուելիս՝ նու չէր կարող սխալուել, որովհետեւ յիշատակարաններում գտոծ տուեալներով նու ոչ թէ կաթողիկոսների իշխանութեան սկիզբն ու վերջն է նշում, այլ միայն յիշատակման թուականները:

**Արետինոսը, որը շատ մօտիկ յարաբերութիւնների մէջ էր եղել Հռոմում Սալմաստեցու հետ, գրում է, որ նա 1550 թուականին մեկնելով այնտեղից, և գնաց կարուոս և կայսեր մօտ՝ Լեհաստանի եւ Մոսկովիայի վրայով հայրենիք վերադառնալու համար<sup>24</sup>:** Բայց Արետինոսը տեղեկութիւն չունի, թէ ինչպիսի՞ ընթացք ունեցաւ այդ ուղեւորութիւնը: Արետինոսի վկայութեանը հետեւելով՝ Հ. Մ. Զամշեանը կըրկնում է, որ 1550 թուականին Սալմաստեցին Հռոմից անցաւ Գերմանիա՝ կարուոս և կայսրին այցելելու, եւ նրա ուղեւորութիւնը հասցնում է մինչեւ հայրենիք: և Եւ ապա անցեալ ընդ Լեհաստան եւ ընդ Մոսկովստան՝ եկն ենաս ի յաջորդ ամի յաշխարհն Հայոց, այսինքն 1551 թուականին<sup>25</sup>:

Ըստ երեւոյթին Զամշեանը 1553 թուակիր մի յիշատակարանի վրայ է յենուաւում իր այս լրացումը կատարելու համար, եթէ երբեք ուրիշ աղբիւր չունի: Սալմաստեցու մասին նա գրում է, թէ «իբրեւ եմուտ յիշմիածին», ընկալաւ զնա փառօք Միքայէլ կաթողիկոս [Սիբաստացի], եւ ետ նմա զառաջին պատիւ նորին եւ զնախագահութիւն: ուստի եւ ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց ՌԲ, այն է յամի տեսան 1553, նա ինքն Ստեփանոս յիշի իբրեւ կաթողիկոս Հայոց<sup>26</sup>:

**Այստեղ մեր խնդիրն այն չէ, թէ Ստեփանոս Սալմաստեցին եջմիածին վերադարձել էր կամ ոչ, այլ այն, թէ նա, ըստ մի յիշատակարանի, 1553 թուականին կենդանի էր եւ յիշատակուում էր որպէս հայոց կաթողիկոս: Իբրեւ այդպիսին՝ նա յիշատակուում է նաեւ Դաւրիժեցու առաջ բերած ձեռագրական տուեալներով՝ մինչեւ 1557 թուականը, ինչպէս տեսանք արդէն: Մենք դեռ ունենք նաեւ Յովհաննիսուկ Մշեցու վկայութիւնն այն մասին, որ Սալմաստեցին 1555 թուականին կենդանի էր եւ Լուովում առաջնորդ էր կարգել Գրիգոր Վարագեցուն: Այս բոլորը ժխտուած են համարուում Պետրովիչի կողմից, թէեւ ժխտման փաստարկումները մեզ չեն համազում: Այնու ամենայնիւ, եթէ նոյնիսկ մի կողմ դնենք այս բոլորը՝ որպէս արտաքին կամ կողմակի տուեալներ, որոնք, ըստ Պետրովիչի, կարող են արժէք չներկայացնել, մենք ունենք ներքին տուեալներ, որոնք Սալմաստեցու կենդանի լինելու ապացոյցն են տալիս 1550-ական թուականների ամբողջ ընթացքում եւ նոյնիսկ 60-ական թուականներին:**

24 Տ.-Է. Assemanus, p. 60.

25 Հ. Մ. Զամշեան, էջ 518:

26 Անդ, էջ 518 - 519:

Հ. Մ. Բժշկեանը, որ 1830 թուականին հրատարակել է Լեհաստանի հայկական գաղութներում կատարած իր որոնումների արդիւնքները, այսպէս կոչուած «Հուռվեան յիշատակարան»-ից բերում է մի հատուած, ուր, Սալմաստեցու մասին խօսուելով, յիշատակուում է նրա կտակը՝ հետեւեալ տեղեկութեամբ. «Գոյ նաեւ իւր կտակ, յորում յիշէ թէ սրբազն հայրապեան Հռովմայ առաքեալ է զինքն առ Ֆէրտինանտոս կայսր Գերմանացւոց, առ որում եկաց ամիսս չորս»<sup>27</sup>: Բժշկեանից գեռ 60 տարի առաջ, Յովաէփ Եպիփան Մինասովիչը իր «Յիշատակարանք հայոց ազգի», թագաւորութեան եւ թագաւորների մասին» անտակ աշխատութեան մէջ նոյն տեղեկութիւնն էր տալիս՝ քաղելով մի աւելի հին ազրիւրից՝ Յիշատական ընկերութեանը պատկանող մի լատին անանուն հեղինակի գրածից, թէ «Կարելի է տեսնել նաեւ [Ստեփանոսի] կտակը՝ նրա [սեփական] կնիքով, որում պատմում է, թէ ինչպէ՞ս է սրբազն քահանայապեաի կողմից ուղարկուել Ֆէրտինանդ կայսեր մօտ եւ չորս ամիս մնացել այնտեղ, եւ յետոյ Լէսոպոլիս վերագարձել»<sup>28</sup>: Պետրովիչն այս երկու ազրիւրներն էլ յիշատակում է՝<sup>29</sup> ասելով, որ նրանց մէջ ոքնչ ինչ մանրամասնութիւններ թէեւ անհիշտ կը թուին, բայց չեն հակասեր պատմական ճշմարտութեան, այլ կը կարօտին բացատրութեան։ եւ տալիս է իր բացատրութիւնը: «Արգարեւ, — գրում է նա, — Կարոլոս և կայսրը (1500—1558), որդին Փիլիպպոս Գեղեցիկի, Աւոտրիսյ արքեդուքսին, եւ Յովինանա Լափացցայի, ժառանգած էր, ի միջի այլոց, նաեւ Հապութուրկներու կալուածներու իրաւունքը: Սակայն 1521-ին ան թողուց Աւոտրիացւոց կալուածներու ժառանգութիւնը ի նպաստ կրտսեր եղբօրը, Ֆէրտինանտաի (1503—1564), որ անոնց թագաւոր եղաւ եւ 1558-ին ալ կայսր: Ասկից առաջ եկած են յիշեալ վկայութիւններու մէջ այդ անձշտութիւնները»: եւ այդ անձշտութիւնների վերաբերեալ որպէս բացատրութիւն՝ Պետրովիչը ենթադրում է, որ Սալմաստեցին հայկական հարցով կարոլոս Ե-ին գիմելիս, պէտք է գիմած լինի նաեւ Ֆէրտինանդ թագաւորին<sup>30</sup>:

Նախ ասենք, որ Բժշկեանի եւ Մինասովիչի գրածները ոչ թէ վկայութիւններ են, ինչպէս համարում է Պետրովիչը, այլ ազրիւրներ, որոնք մեզ հազորդում են Սալմաստեցու ձեռքով գրուած կտակի պարունակութիւնը. ուրեմն՝ վկայութիւնը Սալմաստեցու գրչից է: Երկրորդ՝ նկատենք, որ այստեղ անտեղի է խօսել անձշտութիւնների մասին: Ստեփանոս Սալմաստեցու կտակը, ըստ երկու ազրիւրների, պարզապէս ասում է, որ պայը նեան ուղարկել է Ֆերգինանդ կայսեր մօտ, առանց ասելու, թէ ո՛ր պայն էր ուղարկողը եւ ո՛ր թուականին: Այսքան փոքր եւ այսքան պարզ տեղեկութեան մէջ աւելորդ կը լինէր որոնել պատմական անձշտութիւններ: Բայց Պետրովիչը իր հաշիւններով ինքն է ստեղծում անձշտութիւնները: Ելակէտ ընդունելով Արետինոսի այն վկայութիւնը, թէ Սալմաստեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ի յանձնարարագրով Հռոմից մեկնել էր՝ Գերմանիայի կայսր կարոլոս Ե-ի մօտ գնալու համար<sup>31</sup>, Պետրովիչը բնականօրէն հետեւեցնում է, որ նա, Սալմաստեցին, այդ թուականին Գերմանիայի կայսերական գահի վրայ պիտի գտած լինէր կարոլոս Ե-ին (1519—1558 թթ.)<sup>32</sup> եւ ոչ թէ նրա կրտսեր եղբայր Ֆէրտինանդ Ա-ին, որն այդ ժամանակ ոչ թէ Գերմանիայի կայսր էր, այլ Բոհեմիայի թագաւոր (1527—1558 թթ.), եւ հետագայում է միայն, որ կարոլոս Ե-ին յաջորդեց որպէս կայսր (1558—1564 թթ.)<sup>33</sup>:

27 Հ. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 107։

28 J. E. Minasowicz, «Memorabilia de gente, regno, regibusque Armeniae», Bibliotheca Apostolica Vaticana, Cod. Vat. Lat. № 12561, p. 122.

29 ՊՍՍ էջ 45—47: PChA p. 98-99.

30 ՊՍՍ էջ 47: PChA p. 99.

31 Նրա Ելակէտն իրօք այդ է. «Ստեփանոս Սալմաստեցի 1550-ի ապրիլի վերջերը . . . ուղղուցաւ գէպի վիեննա . . . : Միայն գիտենք աւանդութենէ՞ թէ Հայոց կաթողիկոսը վիեննայի արքունիքին մօտ չորս ամիս մնացած է»: տես ՊՍՍ էջ 31: PChA p. 95-96։

32 Տես «The Encyclopædia Britannica», 14th ed., vol. V, New York, 1929, p. 260-261.

33 Ibidem, vol. IX, New York, 1929, p. 165-166.

Պետրովիչի հենց յիշեալ ելակէտն է, որ նըան մզել է կտակի տեղեկութեան մէջ տեսնելու հակասութիւն եւ այն վերացնելու համար ենթադրութիւն անելու, թէ Սալմաստեցին 1550 թուականին պիտի միաժամանակ այցելոծ լինի կարուս ե կայսրին եւ Ֆերդինանդ թագաւորին:

Բայց Պետրովիչը չի նկատում, որ իր ստեղծած հակասութիւնն ամենեւին էլ չի լուծուում իր տուած մեկնաբանութիւններով, որովհետեւ կտակը ֆերդինանդին տալիս է ոչ թէ քաքաւուր, այլ կայսր տիտղոսը: Եթէ Սալմաստեցին 1550 թուականին գնացած լինէր միաժամանակ թէ՛ Գերմանիայի կայսեր մօտ եւ թէ՛ Բահնմիայի թագաւորի, կտակում ինչո՞ւ լոււթեան պիտի մտանէր կարուս ե կայսեր անունը եւ յիշատակէր միայն նրան ենթակայ Ֆերդինանդ թագաւորի անունը, այն էլ նրան, ֆերդինանդին, չպատկանող կայսր տիտղոսով: Այս փաստերն առում են, որ Սալմաստեցու կտակի ներքին արժէքի գնահատման մէջ նախ Պետրովիչի ելակէտն է սխալ եւ ապա՝ այդ ելակէտի հետեւանքով առաջացած հակասութիւնը վերացնելու համար նրա տուած բացատրութիւնը, որը չի պարզաբանում եւ ոչ մի բան:

Ուրիմն, ըստ Սալմաստեցու կտակի, նա պապի կողմից ուղարկուել եր Ֆերդինանդ Ա կայսեր մօ՛ անշուշտ 1558 թուականին կամ յաջորդ տարիներին, երբ կայսերական գահի վրայ էր Ֆերդինանդ Ա-ը: Այս հետեւութիւնն ամենեւին չի հակասում Արեափինոսի այն վկայութեանը, թէ Սալմաստեցին 1550 թուականին Յուլիոս Գ-ից յանձնարարագիր էր ստացել կարուս Ե-ին ներկայանալու համար<sup>34</sup>, որովհետեւ տարբեր գէպք է Արեափինոսի յիշատակածը եւ տարբեր գէպք՝ կտակում յիշատակուողը, վերջինո՞ ըստ Մինասովիչի եւ Բժշկեանի ազրիւրների: Արեափինոսի յիշատակած թուականին, 1550-ին, Սալմաստեցու գնացած լինելը կարուսի մօտ՝ մինք տարակուական ենք համարում այն պատճառով, որ այդ շրջանում կայսրութեան քաղաքական գրութիւնն ալեկոծ վիճակում էր՝ բուն Գերմանիայում Լութերական շարժման դէմ մզուող պատերազմներով, որոնք լուրջ մտահոգութեան մէջ պահեցին կարուս Ե-ին՝ մինչեւ Առողջութեան հետ կարուս Ե-ի ունեցած մհծ գժուարութիւններով: Այդպիսի պայմաններում, ինչպէս երեւում է, 1550 թուականին ծրագրուած այդ ուղեւորութիւնն առկախ էր մնացած եղել մինչեւ Ֆերդինանդ Ա կայսեր (1558–1564 թթ.) օրերը: Իսկ թէ այս վերջին ժամանակաշրջանում կոնկրետ ո՞ր թուականին է այցելել Սալմաստեցին Ֆերդինանդ Ա-ին՝ յայտնի չէ: Սակայն այս ոլորտներում պարզ եւ անտարակուուի է միայն մի բան՝ այն, թէ Սալմաստեցին գեռ կենդանի էր առնուազն 1558 թուականին, որ է Ֆերդինանդ Ա կայսեր ընտրութեան տարին:

Սակայնոս Սալմաստեցին, ըստ իր կտակի, չորս ամիս մնացել է Ֆերդինանդ Ա-ի արքունիքում: Այս ժամանակամիջոցի նկատելի երկարութիւնը ցոյց է տալիս, որ նա բանակցութիւնների մէջ էր կայսեր հետ. բայց թէ ի՞նչ ընթացք են ունեցել այդ բանակցութիւնները եւ ինչո՞վ են աւարտուել՝ յայտնի չէ: Հ. Ն. Ակինեանը, որը վիեննայի պետական գիւղանում նիւթեր չէր գտել 1550 թուականին կարուս Ե-ի հետ Սալմաստեցու տեսակցութիւն ունեցած լինելու վերաբերեալ («Վիեննայի պետական գիւղանը որ եւ իցէ յիշատակարան չէ պահպանած այս մտին, որչափ քննութիւնը համոզեցին զիս»)<sup>35</sup>, հաւանաբար որեւէ արդիւնքի կը հասնէր, եթէ իր ուրինումները յատկացրած լինէր Ֆերդինանդ Ա-ի իշխանութեան շրջանին:

Այնուհետեւ 1560-ական թուականներին գարձեալ յիշատակութիւն կայ Սակայնոս Սալմաստեցու մտին եւ այս անգամ տեղեկութիւնը վերաբերում է նրա մահուանը: Տեղեկութեան աղբիւրը Յիուսեան հեղինակ Բ. Հերբեստն է, որը ժամանակակից է գէպքին: Հերբեստը, կուովի հայերի հետ իր ունեցած շփումները նկարա-

<sup>34</sup> ՊՍՍ էջ 20–21 եւ 26–27: РЧА թ. 93 օ 180.

<sup>35</sup> Հ. Ն. Ակինեան, «Աղատութեան շարժումը Ժ-Ժ գարերուն Հայոց մէջ», Հանդէս Ամսութեալ, 1917/18, էջ 147:

գրելիս, 1566 թուտկանին գրում է, որ այնտեղ Սիմոն երեցը նրան ասել էր, թէ ռերք, մի քանի տարի առաջ, Հռոմ էր գնացել իր եպիսկոպոսի հետ, որը հիմա կուովում է թաղուած, վերջինու այնտեղ Ս. Պատարագ էր մատուցել հայկական ծէսով<sup>36</sup>: Հերբեռատի այս վկայութիւնը յիշատակում է նաև Պետրովիչը՝ մի ուրիշ կապակցութեամբ եւ իրաւամբ գանում, որ ամի քանի տարի» ասելով կարելի է հասկանալ 2-3 տարի, կամ՝ 3-4 տարի, կամ էլ շատ-շատ՝ 5-6 տարի, բայց ոչ 16 տարի, ինչպէս լուելիոյն համարում է ինքը՝ Պետրովիչը, որպէսզի կարաղանայ տանել-կապել 1550 թուտկանի հետ: Եւ սրանով մենք ժամանակակից Հերբեռատի վկայութեամբ տեղեկութիւն ենք ստանում այն մասին, որ Սալմատեցին մահացել է 1560-ական թուտկանների սկզբի տարիներին եւ թաղուել է Լուովում: Բացի այդ՝ Հերբեռատի «մի քանի տարի առաջ» խօսքը միտժամանակ վկայութիւնն է այն ուղեւութեան, որ Սալմատեցին պիտի կատարած լիներ Լուովից դէպի Հռոմ, որպէսզի պատից յանձնաբարագիր ստանար՝ Յերդինանդ կայսրին ներկայանալու համար:

Այժմ վերյիշենք, որ, ժամանակին, որոշ ազբիւրներում Սալմատեցու մահուան սրպէս տարեթիւ ցոյց տրուած 1551 եւ 1552 թուտկանների մասին խօսելիս, դրեւ էինք. «Մի չարք փաստեր մեզ տասւմ են, թէ լիւեալ քուականներին Սալմատեցին չէր մահացել Լուովում եւ չէր թաղուել այնտեղ»<sup>38</sup>: Այդ հին հաւատամանն են վերաբերում վերեւում մեր ներկայացրած փաստերն ու փաստարկները:

### ԼՈՒՌՎԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պետրովիչն իր հայերէն գրքոյկում Սալմատեցու անունը կրող դամբանական արձանագրութիւնն առաջ է բերում մի քանի հրատարակուած տարբերակներով: Սակայն զարգանալի է, որ նա անտեսում է ճշգրտութիւնները, այնինչ դրանք կարեւոր են: Տեսնենք նրա նշան ազբիւրներից տռաջին երկուը:

Նախ բերենք հնագոյնը՝ Ս. Ստարովուլսկու տուածը, ուղղակի իր ազբիւրից եւ ոչ թէ Պետրովիչից:

HOC SEPULCHRUM EST R̄NDI PATRIS STEPHANI, PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT ET ADUENIENS LEOP. ANIMAM SUAM DEO TRADIDIT ANNO DOMINI 1551 DIE 14 IANUARIJ, IULIO SECUNDO PONTIFICI MAX. REDDIDIT OBEDIENTIAM<sup>39</sup>.

Պետրովիչն այլափոխում է այս արձանագրութիւնը՝ տառերով գրուած լույ Secundo (Յուլիոս Երկրարգին) անունը սրբագրելով եւ դարձնելով հռոմէական թշւանշաններով գրուած լույ III (Յուլիոս Երրորդին)<sup>40</sup>:

Իսկ ինչո՞ւ համար է կատարուել այդ փոփոխութիւնը: Կարելի՞ է մտածել, թէ դա արուած կը լինի պարզապէս արձանագրութեան ասխալն» ուղղելու համար, այն հաշուով, որ 1551 թուտկանին պապական գահի վրայ գտնուողը ոչ թէ Յուլիոս Երկրորդն (1503-1513 թթ.) էր, այլ Յուլիոս Երրորդը (1550-1555 թթ.):

Մենք գժուարանում ենք այդպիսի թեթեւ մօտեցում վերագրել փորձառու պատմաբառն Պետրովիչին, բայց չենք գժուարանում նկատել, որ նա ակնյայտորէն

<sup>36</sup> B. Herbest, «Wypisanie drogi», *MLUR*, vol. 5, str. 4-8.

<sup>37</sup> PCChA p. 148.

<sup>38</sup> Եջմիածին, 1956, № 11-12, էջ 76:

<sup>39</sup> S. Starovolscius (Starowolski), «Monumenta Sarmatorum, viam universæ carnis ingressorum», Cracoviæ, 1655, p. 300.

<sup>40</sup> Տես ՊՍՍ էջ 49-50:

սքողել է արձանագրութեան մէջ գտնուող այդ անմարսելի օսխալը», նկատի ունենալով, որ դա արձանագրութեան կեղծ լինելու ապացոյցներից մէկն է եւ խոչընդուռ է հանդիսանում Պետրովիչի հաշիւներին: Պետրովիչը անհրաժեշտ է համարել կամովին հեռացնել այդ խոչընդուռը ընթերցողի տչքից:

Պետրովիչի այս մտահագութիւնն աւելի է ակնհրեւ դառնում, երբ նու սկսում է զբաղութել արձանագրութեան այն օրինակով, որ հրատարակել է Կ. Նիկոլիցկին:

Պետրովիչն ույստեղ, Ստարովոլսկու օրինակից յետոյ, բերում է Նիկոլիցկու օրինակը.

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI  
PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT, ET  
LEOPOLIM ADVENIENS, ANIMAM SUAM DEO TRADIDIT 1551<sup>41</sup>.

Ինչպէս տեսնում ենք՝ այստեղ չկայ Ստարովոլսկուց ծանօթ «die 14 Ianuarij, Iulio Secundo Pontifici Max. reddidit obedientiam» յաւելուածը. իսկ այդ հանգամանքը մտահոգում է Պետրովիչին եւ նու հետամուտ է լինում մի կերպ դարձանելու Նիկոլիցկու բնագրի այդ «թերութիւնը»:

Մի քանի տարի յետոյ՝ Պետրովիչը Լիհաստանի հայոց եկեղեցական պատմութեանը նույիրած իտալերէն իր հատարում նորից է բերում Նիկոլիցկու բնագիրը, բայց այս անգամին՝ իրեն համար ցանկալի յաւելուածով.

HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI  
PATRIARCHAE MAIORIS ARMENIAE, QUI [ROMAE FUIT ET]  
ADVENIENS LEOPOLIM, ANIMAM SUAM DEO TRADIDIT A. D.  
1551, 14 JANUARII, JULIO II PONTIFICI REDDIDIT OBEDIEN-  
TIAM<sup>42</sup>.

Ստարովիչն ինչպէս էր կատարուել այս գիւտը:

Պետրովիչը թէեւ աղբիւր էր ցոյց տալիս դարձեալ Նիկոլիցկու հրատարակութիւնը, բայց այնտեղ, ինչպէս արդէն տեսանք, գոյութիւն չունէր այդ յաւելուածը: Պարզուում է, որ Պետրովիչը յետին ժամանակների լինացի հեղինակ Թ. Գրոմնիցկու մի գրքից է վերցրել այդ կարկատեալ օրինակը<sup>43</sup>: Ուրեմն՝ Նիկոլիցկու բնագրում կատարուած այդ աղաւաղման հեղինակը Գրոմնիցկին է, բայց հետաքրքիրն այդ չէ, այլ՝ այն, որ Պետրովիչը այս անգամ ձեռնառու է համարել՝ բերել հենց այդ աղաւաղուածը<sup>44</sup>:

Ահա թէ Պետրովիչի աշխատութիւններում ինչպէս են եղծուել կուսվի դամբանական արձանագրութեան այն հանգոյն երկու օրինակները, որոնք յայտնի են Ս. Ստարովոլսկու եւ Կ. Նիկոլիցկու հրատարակութիւններով: Այդ գործում Պետրովիչի գլխաւոր մտահոգութիւնը եղել է այն, որ Յուլիոս Եվլուրով պապը դառնայ Յուլիոս Եվրուրդ, որպէսզի ժամանակից դառնայ Ստամբուլուն եւ այդպիսով «Մեծ Հայոց պատրիարք Ստեփանոսի» անունը կրող արձանագրութեան մէջ ներքին հակասութիւն չմնայ, քանի որ նրա հարազատութիւնից է կախուած Ստամբուլու մահուան տարին ընդունելը որպէս 1551:


41 K. Niesiecki, «Korona polska», t. I, pt 1, Lwo'w, 1728, s. 95. Այս երկի Բ հրատարակութիւնը եղել է հետեւեալ խորագրով՝ «Herbarz polski», t. I, Lipsk, 1839, s. 108. Պետրովիչը օգտագործել է միայն Բ հրատարակութիւնը:

42 PChA p. 88.

43 Tad. Gromnicki, «Ormjanie w Polsce; ich historja, prawa i przywileje», Warszawa, 1889, s. 21.

44 Ուշագիր ստուգումներ կատարելով՝ պարզեցինը, որ այդ յաւելուածը գոյութիւն չունի Նիկոլիցկու երկի ոչ առաջին, ոչ էլ երկրորդ հրատարակութիւնում: Գրոմնիցկին ինքն է կատարել այդ յաւելումը՝ հաւանաբար Ստարովոլսկու հետեւաղութեամբ:

Այդ արձանագրութեան կեղծ լինելու մասին մենք տակաւին ասելիքներ շատ կ'ունենանք: Այսուղ միայն առենք, որ «Ստեփանոս Սալմաստեցու մահուան» արձանագրութիւնը կամ տապանագիրը հովուերգուական կեանք է ունեցել, ժամանակի ընթացքում գիմափախութիւնների է ենթարկուել: Հնագոյն օրինակը, ինչպէս տեսանք, 1655 թուականին Ս. Ստարովուսկու հրատարակածն էր: 1728 թուականին Կ. Նիկորեցկու հրատարակածը՝ դրա բարեփոխուած մի տարբերակն էր: Հետագայում, մի ժամանակ, այդ տապանագրի քարը անյայտացել էր, չգիտես՝ երբ, ինչո՛ւ եւ ինչպէ՞ս, և աեղի էր տուել ենթագրութիւնների, թէ մօտաւորապէս ինչ ձեւով կարող էր եղած լինել նրա բնագիրը<sup>45</sup>: Աւելի ուշ ժամանակներում, — թէ ե՞րբ՝ այդ եւս յայտնի չէ, — նոր տապանագիր է փորագրուել՝ բառացիօրէն Նիկորեցկու տուածընագրի հիման վրայ, միայն մի տարբերութեամբ, որ «1551» թուականից տռաջաւելացուել է երկու սկզբնատառ՝ A. D. (այսինքն՝ «յամի Տեսան»):



HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI  
PATRIS STEPHANI PATRIARCHE MAJO  
RIS ARMENIAE QUI ROMAE FUIT ET LEO  
POLIM ADVENIENS ANIMAM SUAM DEO TRA  
DIDI A. D. 1551

Այս է, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր, զուգորդուած՝ մի անանուն լատինատիպ քանդակի հետ, որին աւանդաբար, — եւ նոյնպէս յայտնի չէ, թէ ո՞ր ժամանակուանից, — «Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցի» անունն են տուել ու տալիս: Արձանագրութեան քարն ու այդ քանդակը չեն գտնուած որեւէ գերեզմանի վրայ, այլ երկուսը միասին տաճարուած ուղղահայեաց դիրքով կանգնեցուած են պատին ու ամբացուած նրա մէջ. տակը՝ արձանագրութեան քարն է, իսկ վրան՝ քանդակիը, այնպէս որ առաջինը կարծես պատուանդան է ծառայում երկրորդին, բայց ուշագիր աչքը կարող է նկատել, որ լայնութեան փոքր չտիեր ունեցող՝ արձանագրութեան քարը չի կարող պատուանդանը լինել լայնութեան աւելի մեծ չափեր ունեցող մի քանդակի: Այսու ամենայնիւ որեւէ մէկը մինչեւ այսօր հաշուի չի առել, որ դրանք իրար հետ կտպ չունեցող երկու տարբեր յուշարձաններ են, որոնք, միասնական համարուելով, առեղծուած են դարձել Լեհաստանի հայ գաղութի պատմութեան մասնագէտների համար: Այդ առեղծուածի մէջ թափանցելու համար՝ պէտք է առանձին վերցնել արձանագրութիւնը, աւելի ճիշտը՝ այդ արձանագրութեան նախական՝ ստարովուսկեան տարբերակը, որը, իր 1551 թուականով եւ Յուլիոս երկրորդ պատի անուան յիշատակութեամբ, յայտնի հակասութիւն է ներկայացնուած, հակասութիւն, որը չարչարել է Պետրովիչի միտքը. բայց մեզ համար ամենակարեւորն այդ ու հակասութիւնն է:

Առեղծուածի լուծման բանալին պէտք է որոնենք Յուլիոս Բ-ի հետքերով: Յուլիոս Բ պատի գահակալել է 1503—1513 թթ., իսկ Ստեփանոս Սալմաստեցին այս

45 S. Baracz, «Rys dziejów ormiańskich», Tarnopol, 1869, s. 112, nota 116. Հմմա. ՊՍ Էջ 52: Անհետացման մասին մեղ յայտնի են քաստեր նաեւ այլ աղբիւրներից:

Հըջանում տակաւին չէր երեւացել պատմութեան բնմի վրայ, հետեւաբար, իթէ մենք կանգ տռնենք այն իրազութեան վրայ, թէ Լուսվի արձանագրութիւնը մեղ զուգորդուած է ներկայացնում Ստեփանոս եւ Յուլիոս Բ անունները, առա հետազոտութեան ուղու վրայ կը պատահենք Յուլիոս-Բին ժամանակակից մի ուրիշ Ստեփանոսի, որն այս տռուժով ուշագրութեան չի առնաւել մինչեւ այժմ։ Դա Ռոշքայի ժամանակագրութեան մէջ 1485 թուականից սկսած որպէս Լուսվի թեմակալ յիշատակուող Ստեփանոս արքեպիսկոպոսն է։ Լուսվի թեմի պատմութեան հետազոտութեանը նուիրուած մի քանի ուսումնատութիւններում տյս Ստեփանոսին անուանում են Ստեփանոս Ա, այն հաշուով, որ հետագայում Ստեփանոցին եւս, ըստ ոմանց, բազմել է Լուսվի աթոռակի վրայ եւ համարուել Ստեփանոս Բ։ Այդ Ստեփանոս Ա անուանումը որդեգրում ենք նաև մենք՝ որպէս տարբերակման եղբ։

Տեսնենք, թէ ո՞վ էր նու։



### ՍՏԵՓԱՆՈՍ Ա, ԹԵՄՈԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԼՈՒԽՎԻ ՀՕՅՈՑ

Ստեփանոս Ռոշքան իր ժամանակագրութեան մէջ մի քանի տեղ յիշատակութիւններ ունի Ստեփանոս Ա արքեպիսկոպոսի մասին։ Առաջին անգամ նրան յիշատակում է 1485 թուականի տակ։ «Տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսն Լէսպոլսի, զորոյ եկամուտն յոյսմ ամի նուիրակքն էջմիածնի տրամագրեցին կոնդակաւ, զորոյ միայն սկիզբն գնեմ տատէն։ Շնորհօք եւն, եկինք նուիրակք հրամանաւ Տէր Ստեփիս կաթողիկոսին, մեք Սոստուածտուր վարդապետու եւ Ներսէս կրօնաւորու, ի կամենից, ի թվին ԶԼԴ եւ հանդիպեցաւ ի տեղս Տ. Յոհաննէս կաթողիկոսն եւ Տէր Ստեփաննոս եպիսկոպոսն եւ . . .։ Սա գնացեալ ի Հռոմ, գաւանէ զուղղափառութիւն եւ յիննաշենցիսէ Ը. ընդունի պարգեւ զխուչ, զմուձէդա, զոռքէդ եւ զսպիտակ եւ զկարմիթ սրբազն զգեստա։ Դարձեալ ի Լէսպոլիս վախճանի։ Իւր կատկն այսպէս Եւ կոնտակն կամէնցու»<sup>46</sup>, իննովկենտիոս Ը-ը գահակալել է 1484-1492 թթ.։

<sup>46</sup> «Ստեփանոսի Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք» (հրատ. Համազասպ Առկեան), Վիեննա, 1964, էջ 160։

Ստեփանոս Ա-ն, ինչպէս երեւում է, 1490 թուականին է գնացել Հռոմ, որովհետեւ այդ թուականի տակ Ռոշքան, Գալուստ Ստեփանեանի մասին խօսելիս, տառմ է. «Ստ (Գալուստ), որպէս թուի, երթալով Ստեփանոսի արքնապիսկոպոսին ի Հռոմ, նստի փոխանակ նորա մինչեւ նա դարձաւ ի Հռոմայ »<sup>47</sup>.

Թէ ե'րբ էր վերադարձել Հռոմից Ստեփանոսը, այդ մասին խօսք չկայ Ռոշքայի մօտ եւ ոչ էլ այն մասին, թէ որքա՞ն էր տեւել Ստեփանոսի առաջնորդական իշխանութիւնը. միայն 1535 թուականի տակ Ռոշքան մի վերջին անգամ եւս յիշատակում է նրան՝ գրելով. «Ստեփանոս արքեպիսկոպոսն Լէոպոլսի յայսմ ամի կենդանի էր»<sup>48</sup> եւ այս տեղեկութեան որպէս աղբիւր ցոյց է տալիս՝ «Եղու. Հէրեթ.» (Benedictus Herbest, jesuita): «Իրանից յետոյ Ռոշքան այլեւս չի խօսում նրա մասին եւ տեղեկութիւն չունի նոտեւ նրա մահուան ժամանակի վերաբերեալ:

Պէտք է նշել, որ լինական պատմաբանները ճշգրիտ տեղեկութիւններ ընդհանրապէս չունեն Ստեփանոս Ա-ի մահուան թուականի մասին, բայց նրանցից ոմանք, որպէս թէ հիմնուելով Ռոշքայի ժամանակագրութեան վրայ եւ կամ նրա անուղղակի ազդեցութեան տակ, համարում են, որ Ստեփանոս Ա-ի իշխանութեան վերջը եւ նրա մահը տեղի է ունեցել 1492 թուականին. այդպէս են համարում Բարոնչը, Լիխիցին, Օբերտինուկին եւ այլն<sup>49</sup>: Այդպէս է ընդունում եւ Պետրովիչը<sup>50</sup>, եւ ստեփայն՝ ինդիրն այն է, որ այդ կարծիքն արտայայտող կամ յուշող տուեալ չկայ Ռոշքայի ժամանակագրութեան մէջ: 1492 տարեթուի տակ Ռոշքան առհասարակ ոչ մի գէպք չի արձանագրում եւ ոչ էլ Ստեփանոս Ա-ի անունն է յիշատակում<sup>51</sup>:

Այդ ժամանակագրութեան մէջ, 1485 եւ 1490 տարեթուերի տակ, ամբողջ առուածն այն է միայն, որ Ստեփանոս արքեպիսկոպոսը 1490 թուականին Հռոմ է գնացել, իսկ յետոյ, յայտնի չէ, թէ ե'րբ, մահացել է Լուովում, ինչպէս ցոյց է տալիս նրա կտակը<sup>52</sup>: Առանց տեղելու, թէ ե'րբ է վերադարձել Հռոմից եւ ե'րբ է մահացել նա, Ռոշքան գրում է. «Դարձեալ ի Լէոպոլսի վախճանի. իւր կտակն այսպէս»: Այստեղ գտրձեալ բառը չի նշանակում դառնալով, այսինքն՝ Հռոմից դառնալով, այլ՝ նորից, այսինքն՝ ըստ մի ուրիշ տեղեկութեան, հետեւաբար՝ ըստ մի ուրիշ տեղեկութեան նաև մեռնում է Լուովում, իսկ այդ տեղեկութեան աղբիւրը նոյնինքն Ստեփանոսի կտակն է, որի թուականը չի նշուած:

Եւ իրօք, ճիշտ կշռադատելով Ռոշքայի գրանցած տուեալները, դժուար չէ նկատել, որ Ստեփանոս Ա-ը Հռոմի ուղեւորութիւնից յետոյ վերադարձել էր Լուով եւ նրա մահն այնտեղ էր տեղի ունեցել, իսկ մինչեւ մահանալը նա գեռ կենդանի էր 1535 թուականին<sup>53</sup>: Ուրեմն՝ սխալ է նրան մեռած համարել 1492 թուականին՝ «յեռուելով» Ռոշքայի վրայ: Այդ թուականից յետոյ Ստեփանոսը դեռ երկար է ապրել Լուովում:

Մեր փաստարկումների հետեւութիւնն այն չէ, թէ Ստեփանոս Ա-ը 1490-ական թուականներին Լուով վերադառնալուց յետոյ նորից է բազմել առաջնորդական աթոռի վրայ: Ո՞չ. եւ ընդհակառակն: Պատմական փաստերն ասում են, որ այդ շըրջանում, Գալուստի փոխանորդական կարճ իշխանութիւնից (1490–1491<sup>o</sup> թթ.) յետոյ,

47 Անդ, էջ 160: Բառ այսմ՝ Գալուստը առաջնորդական փոխանորդ էր նշանակուել: Նա հետագայում, 1515/16 թուականներին, ընտրուել է թեմակալ առաջնորդ. հմմտ. PChA p. 78-79:

48 Ստ. Ռոշքա, էջ 163:

49 S. Baracz, «Rys dziejo'w ormian'skich», s. 109; Cz. Lechicki, «Kościół ormiański w Polsce» Lwo'w, 1928, s. 40; S. Obertyn'ski, «Die florentiner Union der polnischen Armenier und ihr Bischofskatalog», *Orientalia Christiana*, Roma, vol. XCVI, 1934, S. 32-33; «Schematismus Archidioecesis Leopoliensis ritus armeno-catholici pro anno Domini 1936», Leopoli, p. 10. հմմտ. PChA p. 75-76.

50 Հմմտ. PChA p. 74-77.

51 Հմմտ. Ստ. Ռոշքա, էջ 161:

52 Անդ, էջ 160:

53 Անդ, էջ 163:



առաջնորդական գահի տէրը Խաչատուր Իլովացին էր 1492–1502 թուականներին<sup>54</sup>, Վերջինս նախկինում, 1461 թուականից մինչեւ Ստեփանոս Ա.-ի ընտրութիւնը 1485 թուականին (կամ գուցէ մի քիչ առաջ), արդէն Լուսվի աթոռի տէրն էր հղել<sup>55</sup>, իսկ այժմ նրա վերաբազմելն այդ աթոռի վրայ մենք դիտում ենք Հռոմում լատինացանութիւն եւ պատի հպատակութիւնն ընդունած Ստեփանոսի դէմ որպէս բողոքի եւ ընդվզման ապացոյց կոմ շարժում՝ էջմիածնի աթոռին հաւատարիմ Լուսվահայերի եւ նրանց երեւելիների կողմից, եւ ոչ թէ որպէս հատեւանք այն բանի, որ Ստեփանոսը մահացած պէտք է լինէր 1492 թուականին, ինչպէս կարծում է Պետրովիչը<sup>56</sup>: Ստեփանոսը շարունակում էր Լուսվում ապրել անտեսուած եւ արհամարհուած վիճակում, առաջնորդական իրաւունքներից հեռաւ, Խաչատրի մահից յետոյ, 1502–1515 թուականներին, աթոռը թափուր էր մնացել մինչեւ Գալստի ընտրութիւնը<sup>57</sup>, իսկ այս տասնչորս տարուայ թափրութեան շրջանում, երբ ասպարէզում մի յարմար եւ արժանաւոր մարդ չէր հանդէս եկիլ առաջնորդական աթոռի համար, մեկուսացուած երբեմի թեմակալ Ստեփանոսն, ամենայն հաւանականութեամբ, փորձ էր կատարել իր կարցրած աթոռը վերաբաւելու՝ իր կողմնակիցների եւ անդական լատին հոգեւորականութեան օժանդակութեամբ Հռոմից ստանալով իր հաստատումը: Եւ այս հանգամտնքներում՝ Ստեփանոս Ա.-ը, իր հպատակութիւնը վերահաւատակով, պէտք է կրկին անգամ Հռոմ այցելուծ լինի այդ շրջանում, Խաչատուր Իլովացու մահից (1502 թ.) հաւանաբար քիչ յետոյ, երբ այնտեղ իննովկենատիս Ը-ի յաջորդներից Յուլիոս Բ-ն էր գտնուում քահանայապետական գահի վրայ (1503–1513 թթ.). Եւ ահա այդ է, որ, մեր կարծիքով, արտայայտուած է Լուսվի գամբանային արձանագրութեան մէջ, թէ «հնազանդութիւն յայտնեց գերազոյն քահանայապետ Յուլիոս Բ-ին» (Iulio Secundo Maximo reddidit obedientiam):

Կարծում ենք, որ սրանում է գողտնիքը Լուսվի արձանագրութեան մէջ Ստեփանոս եւ Յուլիոս Բ անունների զուգորդման:

Բնականաբար Ստեփանոսի համար Յուլիոս Բ-ից ճանաչում ստանալը սրեւէ գործնական արդիւնք չէր կարող ունենալ նրա հետապնդած նպատակի առումով, ուրովհետեւ լեհական պետութեան մէջ ազգային-կրօնական համայնքների կառավարման համար գոյութիւն ունէր իրաւական սահմանուած կարդ, որի հոմաձայն այդ համայնքներն իրենք էին ընտրում իրենց առաջնորդներին եւ Լեհաստանի թագաւորները պարզապէս վաւերացում էին տալիս նրանց<sup>58</sup>. Եւ այդ իրաւունքի հիման վրայ էլ Լուսվի հեհերձուածող հայութիւնը, իր «հերձուածող» երեւելիների զեկավարութեամբ, նախընտրեց մնալ առանց առաջնորդի՝ մինչեւ 1515/16 թուականները, քան առաջնորդական աթոռը կրկին յանձնել լատինագլաւան Ստեփանոսին:

Թէ ե՛րբ է մահացել Ստեփանոս Ա.-ը, այդ մասին ոչ մի տեղեկութիւն չկայ հայկական եւ լեհական ազբիւրներում: Հաւանաբար չափազանցութեան մէջ ընկած չենք լինի, եթէ ընդունենք, որ նա մօտ 90 տարեկան հասակում մահացած լինի 1551 թուականի յունուարին. իսկ դա լիովին հնարաւոր է: Ինչպէս տեսանք՝ Ստեփանոսը Լուսվի աթոռի վրայ էր 1485 թուականին (հաւանաբար նոր էր ընտրուել). իսկ եթէ այդ ժամանակ եղած լինէր մօտ 25 տարեկան, ապա 1551 թուականի յունուարին կը լինէր 90 տարեկան: Ենթագրենք՝ լինէր նոյնիսկ 95 տարեկան: Եւ ամենեւին տեղի չկայ կասկածելու, որ մեզ ծանօթ գամբանային արձանագրութեան մէջ

54 PChA p. 67 – 74 e 77.

55 Տես եւ հմմաւ. Ստ. Թոշքա, էջ 158 – 161:

56 PChA p. 77.

57 Ibidem, p. 78 – 84.

58 Լեհահայերի ինքնալարաւթեան իրաւունքի մասին նիւթեր շատ կան: Վերջին եւ լաւագոյն ուսումնասիրութիւններից մէկն է՝ G. Petrowicz, «L'organisation juridique des Arméniens sous les monarques polonais», *Revue des Études Arméniennes*, Paris, nouv. série, t. IV, 1967, p. 321–354.



Լուսվի հայոց մայր տաճարը  
(Կառուցուած՝ 1363 թ.)

եղած նշումը, թէ «հոգին տւանդեց 1551 թ. յունուարի 14ին» (animam suam Deo tradidit Anno Domini 1551 die 14 Ianuarij) վերաբերում է Ստեփանոս Ա-ին եւ ոչ թէ Ստեփանոս Սալմաստեցուն, քանի որ, հենց Պետրովիչի ձեռքով յայտնաբերուած արխիւային մի վաւերագրի համաձայն, Սալմաստեցին գրանից յետոյ՝ 1551 թուականի մայիսի 19-ին իսկ գեռ կենդանի էր<sup>59</sup>:

Ստեփանոս Ա-ի մասին է յատուկ չեշտով գրուած «որ եւ յերկար ապրեցաւ» խօսքը, որ կայ «Լուսվեան յիշատակարան»-ում եւ գա առաւել եւս իրաւունք է տալիս մեզ ասելու, որ 1551 թ. յունուարի 14-ին մահացողը նա է<sup>60</sup>:

Իսկ Լուսվի դամբանագիրը որն, ինչպէս ասել ենք ժամանակին եւ ասում ենք նաեւ հիմա, անկասկած կեղծ է: Այդ դամբանագիրը, որ ժամանակակից չէ երկու Ստեփանոսներից ոչ մէկին, յարմարովի կառուցուածք ունի: Մեր կարծիքով դրա հիմքը կազմել է Ստեփանոս Ա-ի այժմ անյայտ գերեզմանի վրայ գտնուած արձանագրութիւնը՝ 14 յունուարի 1551 թուականով, որի վրայ բնականաբար նաեւ պիտի

59 ՊԱՍ Էջ 44 եւ 106: РChА p. 97 - 98.

60 Վլուսվեան յիշատակարան»-ը, ինչպէս առհասարակ լեհական գրեթէ բոլոր ազգիւրները, կամ շփոթաբար ի մի են ձուլում երկու Ստեփանոսներին, կամ էլ, անջատ գնելու դէպքերում, իրար են խառնում նրանց վերաբերող տեղեկութիւնները: Վլուսվեան յիշատակարան»-ում գտնուող որ եւ յերկար ապրեցաւ յաւելումը (տես Հ. Մ. Բժշկեան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Էջ 107, մեր կարծիքով, վերաբերում է Ստեփանոս Ա-ին, քանի որ Սալմաստեցին երկար չի ապրել:

նշուած լինէր, որ նա գնացել է Հռոմ և հպատակութիւն յայտնել Յուլիոս Բ պապին (Anno Domini 1551 die 14 Ianuarij և Julio Secundo Pontifici Max. reddidit obedi-entiam): Հետագայում՝ գաղութում լոտինականութեան համար տարուազ պայքարի շրջանում, այսինքն Ժէ դարի 30-ական թուականներին (թէ եւ առաջ մտածում էինք՝ 60-ական թթ.), երբ որոշել են նշանաւոր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի համար տապանագիր պատրաստել, անգիտաբար դրայ են փոխադրել նաեւ Ստեփա-նոս Ա-ի տապանագրի տեղեկութիւնները՝ առանց իմանալու, որ 1551թ. յունուարի 14-ին Սալմաստեցին գեռ մեռած չէր, ինչպէս եւ տուանց երկար-բարակ մտածելու, որ Յուլիոս Բ-ը եւ Ստեփանոս Սալմաստեցին ժամանակակիցներ չէին: Տապանագրում երկու Ստեփանոսների շփոթման ու ձուլման մէջ դեր է խաղացել նաեւ այն հանգա-մանքը, որ, Ստեփանոս Ա-ի նման, Ստեփանոս Սալմաստեցին եւս գնացել էր Հռոմ:

### ՄԵՅԻ ՅՈՎԱՆՆԻՍՊԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստեփանոս Սալմաստեցու կենսագրութեան հարցերի կապակցութեամբ մենք հրատարակել էինք Մշեցի Յովհաննիսուկի գրչին պատկանող երեք յիշատակարաններ<sup>61</sup>, հանելով Ղեւանդ վրդ. Փիրզակեմեանի կազմած անտիպ ժողովածուներից<sup>62</sup>:

Մեր այդ հրատարակութեան մէջ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանում ճշգրտման կարգով անկիւնաւոր փակագծերի մէջ աւելացրել էինք երկու բառեր, համարելով, որ դրանք «անուշագրութեան կամ շտապողականութեան հետեւանքով խուսափել են առանց այն էլ անփոյթ եւ անքերական շարագրող Մշեցի Օհանիսուկի գրչից» եւ դրանցով «անխագասութիւնը գտանում է յատակ եւ հասկանալիք»: չէինք մոռացել նաեւ աւելացնել, որ տրամաբանական այդ լրացումը մեղանից առաջ կատարել էր նաեւ Փիրզակեմեանն ինքը յիշատակարանների հուաքողը: Տուեալ յիշա-տակարանում, որը գրուած է 1555 թուականին, Յովհաննիսուկը խնդրում է յիշել զգիրիգոր Վարագեցի՝ նորաբողբոջ քաջ բարունապետն . . . եւ զուսուցիչն զՍտեփա-նոս կաթուղիկոս Սալմաստեցին: որ ի Ռ. (1551թ.) թուին Հայոց առ Քրիստոս փո-խեցաւ Յիլով քաղաքին [եպիսկոպոսն], եւ կաթուղիկոսն] եղ յաթոռ եպիսկոպոսու-թեան իլովայ զգրիգոր Վարագետան: իսկ Յովհաննիսուկի երկրորդ եւ երրորդ յի-շատակարաններում ասուում էր. «Գրիգոր Վարագապետն, որ թուին ՌԴ. (1555թ.) յապրիլ ժԴ. (14) եպիսկոպոս եղեւ լով եւ կամենից մայրաքաղաքացած եւ «զգրիգոր Վարագապետն» եղ կաթուղիկոսն՝ եպիսկոպոս քաղաքին [լովայ]: Էստ այս տուեալների մենք գտնում էինք, — ինչպէս մեղանից էլ առաջ Փիրզակեմեանը գտել էր, — «որ 1551թ. մահացաղը հայոց կաթողիկոսը չէր, այլ լուսովի նախկին աթոռակողը, հե-տեւաբար կաթողիկոսը, 1555թ. գտնուելով Լուսովում, այնտեղ թեմակալ էր նշանա-կել Գրիգոր Վարագեցուն:

Պետրովիչը, սուկայն, առարկելի համարելով Յովհաննիսուկի յիշատակարան-ների համեմատութիւնից բխող մեր այս եղբակացութիւնը, բերել է հետեւեալ պատ-ճառաբանութիւնը. «Գրիգոր Վարագեցիի նախորդը, Գալուստ Ստեփանեան, վախճա-նած էր 1542-ի ատենները: Այս պատճական իրողութիւնը, մեզի համաձայն, անվի-ճելի է: Ուստի Յովհաննիսուկի յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սալմաս-տեցիի մահը՝ 1551-ին, Լէսպոլսոյ մէջ, եւ ոչ թէ Գրիգոր Վարագեցիին նախորդինը: . . . Ուրեմն, պէտք է եղբակացնենք՝ որ մեր ըստածներու լոյսին տակ, Յովհաննիսուկի յիշատակարաններու այն մեկնութիւնը զոր տուած է արգոյ Անասեան՝ անհիմն է. եւ թէ այդ յիշատակարանները իր ըստածներուն ճիշտ հակառակը կը փաստենք<sup>63</sup>:»

61 Եջմիածին, 1956, Խ 8-9, էջ 97-98:

62 Երեւանի Պետական Մատենադարանի ձեռ. №. №. 6273 և 6332:

63 ՊՍՍ էջ 76-77:

Պետրովիչի առարկութիւնն այսքան է յիշեալ յիշատակարանների կապակցութեամբ, հաւասաելով, որ Վարագեցուն նախորդող եպիսկոպոսը մահացել էր մօտաւորապէս 1542 թուականին<sup>64</sup> և ոչ թէ 1551-ին, իսկ այս թուականին մահացողը՝ Ստեփանոս Սոլմատաեցին էր:

Վարագեցու նախորդին վերաբերող առարկութիւնը իրաւացի է այնքանով, որ մենք, այդ նախորդի մասին ակնարկելիս, նրան անուանել էինք «Լուսվի նախկին եպիսկոպոս»՝ թէեւ առանց յանուանէ Գալուստ Ստեփանեանին նկատի ունենալու ընդունենք, որ այդ անծանօթին «եպիսկոպոս» անուանելը՝ վրիպում էր մեր կողմից Բայց Պետրովիչին յայտնի էր, որ Լուսվի աթոռի վրայ առաջնորդական իրաւութիւններով Վարագեցու անմիջական նախորդը ոչ թէ վաղուց մահացած Գալուստ եպիսկոպոսն էր, այլ, ըստ իրողութեան, Տէր Նիկոլ աւագերէցը: Այդ մասին իմանաւմ ենք Ստեփանոս Սոլմատաեցու այն անտիպ կոնդակից, որ նա էջմիածնից 1547 թ. նոյեմբերի 13-ին ուղղել է Լուսվի հայ երեւելիներին, յայտնելով, որ Լուսվի թափուր աթոռի համար մինչեւ մի եպիսկոպոսի ընտրութիւնը՝ առաջնորդական աեղապահ էր նշանակում Տէր Նիկոլ իլովացուն. «... եւ ընդ աւրհնութեանս ծանիք իլովայ քահանայք Տէր Յովհաննէս, Տէր Վասքաւ, պարոն Գրիգորչա Էրէցփոխտն, պարոն իւրքաւ Էրէցփոխտն. ձեզ ծանուցումն լիցի որ զՏէր Նիկուլն աւագէրէց արի իւով քաղաքին . . . , եւ թէ դուք իմ էրէցփոխտն էք, նայ պիտի զդա իբր զձեր եղբայր ընդունէք եւ ձեզ խորհրդակից առնէք զէրէցդ, այլ մարդ չմնաց իլովդ. թէ զիմ աւրհնութիւնս ուղէք, նայ պիտի զդայ լաւ ընդունէք, հասկին չհասկին զդայ այլ հարցուցէք մինչեւ Աստուած ձեզ եպիսկոպոս պատրաստէ»<sup>65</sup>: Այս առաջնորդուկան աեղապահը մի քանի տարի յիտոյ յիշատակուում է նաև Սիդիս մոնդ Բ թագաւորի այն նամակում, որն ուղղուած է Ստեփանոս Սոլմատաեցուն (19 մայիսի 1551 թ.) յունադաւան երկու ազաների մկրտման կապակցութեամբ. այնտեղ թագաւորն ասում է, որ, իրեն հասած տեղեկութեան համաձայն, այդ գործը կատարել է «Բո Տէրութիւնը եւ կամ Լուսվի քողաքում հոգեւոր գործերի գծով Նրա պաշտօնատարք»<sup>66</sup>: Տարակոյս չկայ, որ այստեղ խօսքը Տէր Նիկոլի մասին է, թէեւ անունը չի յիշատակուում:

Արդ՝ եթէ մենք համարում ենք, որ Յովհաննիսուկի առաջին յիշատակարանի համաձայն 1551 թ. մահացողը Լուսվի թեմական իշխանութեան մէջ Վարագեցուն նախորդողն է, ապա ըստ ինքեան խօսքը վերաբերում է 1547 թ. նշանակուած եւ 1551 թ. մայիսին յիշատակուող առաջնորդական աեղապահ Նիկոլ իլովացուն եւ ոչ թէ մօտաւորապէս 1542 թ. մահացած եպիսկոպոսին:

Պետրովիչն ընդհանրապէս համաձայն չլինելով մեզ հետ, համարում է, որ, ինչպէս տեսանք, տուեալ յիշատակարանում Ստեփանոս Սոլմատաեցու մահուան տարեթիւն է տրուած եւ, որպէս այդպիսու, այս 1551 տարեթուի վրայ նա պնդում է, ասելով, թէ «Յովհաննիսուկի յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սոլմատաեցի մահը՝ 1551-ին»<sup>67</sup> եւ կամ, Վարագեցու կապակցութեամբ նոյն միտքը կրկնելով, ասում է, թէ նրա ընտրութիւնը եղել է ողեւ 1551 թուականի լրանալուց էլ առաջ»<sup>68</sup>: Եւ սակայն, հակառակ իր այս կարծիքին, Պետրովիչը յիտոյ, ելնելով զանազան այլ հանգամանքներից, գտնում է, որ «Ստեփանոս Սոլմատաեցի մեռած է 1552-ի յունուար 14-ին» եւ դա է, որ «կը համապատասխանէ պատմական ճշմարտութեան»<sup>69</sup> կամ»

64 Այս մասին տես նաև ՊChA p. 82 - 93:

65 Վենետիկի Միիթարեան Մատենադարանում պահուող այս կոնդակի Լուսապատճենը՝ PChA p. 178:

66 Այս վաւերագրի մասին վերեւում տես մեր №. 17 ժանօթագրութիւնը:

67 ՊՍՍ էջ 77:

68 PChA p. 97.

69 ՊՍՍ էջ 104:

շայլ եւս յայտնի է որ Ստեփանոս Սալմաստեցի 1552-ի սկիզբները մեռած է»<sup>70</sup>: Պետք ովհիչի իրար ժխտող այս կարծիքներից ո՞րն է, որ «կը համապատասխանէ պատմական ճշմարտութեան», Այսքանը՝ Սալմաստեցու մահուան թուականի կապակցութեամբ:

Ինչ վերաբերում է Գրիգոր Վարագեցու ընտրութեան թուականի հարցին՝ Պետքովիչը, շարունակելով համարել, թէ Յովհաննիսուկի առաջին յիշտատկարանում գտնուող 1551 թուականը Սալմաստեցու մահուան տարին է ցոյց տալիս եւ դա համապատասխանում է, ըստ Պետքովիչի, Լուսվի տապանաքարի վրայ երեւացող տարեթուին, աշխատում է միւս երկու յիշտատկարանները ժամանակագրօրէն հաշտեցնել առաջինի հետ՝ ենթադրաբար առաջ քաշելով այն միտքը, թէ Սալմաստեցին 1551 թ. մահանալուց առաջ թեմի առաջնորդ է գրել իր աշակերտին, որի պաշտօնի իրաւական հաստատումն է, որ տեղի է ունեցել 1555 թուականին: Պետքովիչի այս ենթադրութիւնն ընդգրկում է, ուրեմն, 1551-1555 թթ. շրջանը, որի մասին նա գրում է. «Գրիգոր Վարագեցիի Լէսպոլսոյ աթուախն բարձրացումը, կ'երեւի թէ Լէհաստանի հայոց միաձայնութեամբ եղած չէ. որովհետեւ միայն մէկ մասը (այն է Լէսպոլսոյ Մեծերու խումբը) որոշում առաւ Սիկիզմոնդ Բ. Օգոստոս թագաւորին ներկայացնել խնդրանքը, նորընտիր եպիսկոպոսին հաստատումին համար. եւ ինչ որ աւելի նշանակալից է, այս ալ միայն 1551-ի սկիզբները»<sup>71</sup>, կամ թէ՝ «նորընտիր առաջնորդը, Գրիգոր, ինչպէս տեսանք, Լէհաստանի Հայոց մէջ ծագած տարածայնութիւններու հետեւանքով, իր պաշտօնին մէջ կրցաւ հաստատուիլ, Սիկիզմոնտ թագաւորին հրամանով, միայն 1555-ի մարտի 21-ին. հետեւաբար Յովհաննիսուկ իր երկրորդ յիշտատկարանին մէջ արձանագրած է այն իրողութիւնը, թէ Գրիգոր Վարագեցին Լէհաստանի հայոց (Լուսվի եւ Կամենիցի) արքեպիսկոպոս եղած է (իրաւապէս) 1555-ի ապրիլի 14-ին»<sup>72</sup>: Սակայն Պետքովիչի այս տողերի մէջ մենք չենք գտնում որեւէ հաստատող փաստ այն մասին, թէ Վարագեցին 1551 թուականին էր ընտրուել եւ նրա հաստատումը ձգձգուել էր մինչեւ 1555 թուականը, ինչպէս եւ չենք գտնում որեւէ աղբիւր կամ ապացոյց այն մասին, թէ Լէհանայերի մէջ Վարագեցու շուրջ եղել են տարածայնութիւններ, որոնք եւ պատճառ են հանդիսացել ձգձգումների. Վարագեցու շուրջ եւ նրա ու գաղութի երեւելիների միջեւ ճիշտ է, որ եղել են տարածայնութիւններ եկեղեցական ունեցուածքի մատակարարման եւ վարչական իրաւասութիւնների հարցերով, բայց դա պատկանում է աւելի ուշ ժամանակաշրջանի՝ ոչ վաղ քան 1557 եւ հետագայ թուականներին»<sup>73</sup>, եւ շատ արհեստական է ընդհանրացման կարգով այդ փաստերը տարածելի համարել նաև աւելի հին՝ 1551-1555 թթ. շրջանի վրայ: Հայկական եւ լեհական ոչ մի աղբիւր եւ ուսումնասիրութիւն համաձայն չէ Պետքովիչի կարծիքի հետ՝ Վարագեցու ընտրութիւնը յետ տանելու մինչեւ 1551 թուականը: Այդ մասին բաւական է կարդալ հէնց Պետքովիչի հետեւել տողերը»<sup>74</sup>.

«Այս առաջնորդի դէմքը մինչեւ այժմ մասմբ միայն յայտնի էր հայ եւ լեհ պատմաբաններին: Այդպիսի բացի պատճառը էր, եւ է տակաւին, միշտ նոյնը, այն է՝ պատմական համապատասխան աղբիւրների նուազութիւնը: Հետեւաբար զարմանալի չէ, եթէ այդ պատմաբանները ամենից առաջ միաձայն չեն Գրիգոր Գ-ի ընտրութեան տարեթուի հարցումը»<sup>75</sup>, Բարոնչը, ստուգիւ, իր առաջին աշխատութեան մէջ թեմակալի ընտրութիւնը թուագրել էր 1557<sup>76</sup>. Երկրորդ երկասիրութեան մէջ, ընդհակա-

70 Անդ, էջ 108:

71 Անդ, էջ 41:

72 Անդ, էջ 77:

73 Ստ. Բոշքա, էջ 164-165: Ընդարձակ եւ այլ փաստերով տես նաև ՌԺԱ թ. 108 ո աշխատանք:

74 ՌԺԱ թ. 103.

75 Հ. Դ. Ալիշան, «Կամենից», Վենետիկ, 1896, էջ 135-136: K. Niesiecki, «Herbarz polski», t. I, s. 108:

76 S. Baracz, «Żywoty sławnych Ormian w Polsce», Lwów, 1856, s. 136.

ուակն, այն դնում է 1554-ին<sup>77</sup>: Յետոյ, Զալիսարիասինեիչը բուարաբուռմ է բերելով  
Մինսովիչի կողմից մասնացոյց արուած թուականը, այն է՝ 1557<sup>78</sup>, որ Լեխիցկին  
եւս ընդունում է<sup>79</sup>: Օրերախնուկին, ընդհակառակն, մի ժամանակ այդ թուականը  
1555 համարելուց<sup>80</sup> յետոյ, յաջորդաբար այն տեղափախեց եւ նշեց 1549-ից յետոյց<sup>81</sup>:

Պատմագիտութեան մէջ տիրող այս լիովին անստոյդ գրութիւնն ինքնին ու-  
շագրաւ է այս հարցում, ուստի եւ, յամենայն գէպս, արհեստական են Պետրովիչի  
ճիզիրը՝ ենթադրութիւններով 1551-1555 թթ. մի շրջան ստեղծելու՝ Գրիգոր Վարա-  
գեցու առաջնօրդական կետնքում, այն էլ յենուելով լոկ Յովհաննիսուկի առաջին  
յիշատակարանի անհաստատ տեղեկութեան վրայ:



77 Idem, «Rys dziejów ormiańskich», s. 112.

78 F. Zacharyasiewicz, «Wiadomości o Ormianach w Polsee», Lwo'w, 1842, s. 39. J. E. Minasovi-  
cius, «Tetraستicha vita singulorum Archiepiscoporum Leopoli nsum inclitae Nationis Armenae in Polonia  
brevi carmine designantia», Augustae Masoviorum, 1762, ad an. 1557.

79 Cz. Lechicki, «Kos'cioł Ormian'ski w Polsce», s. 41.

80 Z. Obertyński, «Na marginesie diecezjalnego schematyzmu ormiańskiego», *Sprawozdanie z  
Posiedzen Towarzystwa Naukowego*, Warszawa, t. XXVI, 1933, s. 212.

81 Idem, «Die florentiner Union der polnischen Armenier...», S. 36 - 38.

ԻՆՉՈ՞Ւ «ԿԱԹՈՂԻԿԵ» ԵՒ ՈՉ «ԿԱԹՈՂԻԿԵԱՅ»

ինչպէս միշտ, այս յօդուածում եւս մենք խուսափել ենք մեր հռոմէական հայերի համար կարողիկէ անուանումը կիրառելուց եւ նախընտրել՝ եւրոպական լեզուներում սովորական գարձած կարողիկ անուանումը, թէեւ վերջինս եւս հաճելի չէ իր արդիականօրէն օտար կերպարանքով։ Տուեալ գէպքում խուսափումը կարողիկէ բառից՝ զուտ լեզուական է մեզ համար։

Կարողիկէ բառը յունարէնից եկած իգական սեռի ածական է, որը նշանակում է «ընդհանրական»։ Յունարէնի քերականական սկզբունքների համաձայն այդ ածականը, գոյականների հետ սեռով համաձայնուելու համար, ունի երեք ձեւեր. արական՝ չափուած, իգական՝ չափուած, չեղոք՝ չափուած։ Դեռեւս մեր թարգմանիչների գարաչանում այս ածականի իգական չափուած (կաթողիկէ) ձեւը, իգական սեռի գոյական չափուած (եկեղեցի) բառի հետ միացած, սովորակի մեքենայական տառադարձութեամբ մուտք է գործել հայերէնի մէջ՝ կարողիկէ եկեղեցի (չափուած չափուած) ձեւով, իսկ այդ անուանումն էլ ժամանակի ընթացքում Հռոմէական եկեղեցու համար գարձել է յատուկ անուն։

Այսքանը բառ է ասելու համար, թէ ճիշտ չէ ծագումով իգական ձեւ ունեցող կարողիկէ բառը հայերէնում գործածել անսեռ բառերի հետ եւ ընդհանրապէս ոչ-իգական բնոյթ ունեցող հանգամանքների մէջ, ինչպէս, օրինակ, Հռոմեական Եկեղեցուն պատկանող անհատներ կամ հռոմեադաւաններ իմաստով։ սխալ է տսել՝ կարողիկէներ, կարողիկէ հայեր, հայ կարողիկէներ։

**Իսկ ի՞նչ անել:**

Քանի որ կարողիկէ բառի վերջին և տառը յունարէնի իգական դ ածանցն է, պէտք է ջնջել այդ եւ, մեր լեզուի սգուն համապատասխանող անսեռ եալ ածանցով, օգտագործել բառը կարողիկեալ ձեւով, ինչպէս արգէն նոր կտակարանի հայերէն թարգմանութեան մէջ մի շարք գրքեր անուանում են կարողիկեալ բղրեւ։ Այս հարցերի լուսաբանման համար կարելի է դիմել նաև հայերէնի վենետիկեան կոթողային բառարանի օժանդակութեանը<sup>82</sup>։ Հայերէն եայ ածանցով մեր հռոմէական հայերի անուանումը կը դառնայ տսելի հայաբոյր ու աւելի համակրելի, եւ մենք այսուհետեւ կարող ենք ունենալ կարողիկեալ հայեր, հայ կարողիկեաներ եւ գրանով կ'ագատաւենք ե՛ւ կարողիկէ-ից, ե՛ւ կարողիկ-ից։ Մենք եայ ածանցով ունենք շատ բառեր՝ ներօեալ, մերօեալ, առժամեալ, միաբնեալ, երկաբնեալ, ոսկեալ, արծարեալ եւայլն։ Նոյն եայ ածանցով ածականները կարող են գործածուել նաև գոյականաբար, ինչպէս՝ առօրեալ («Զեր առօրեան ինչպէս է անցնում») եւ այլն։

82 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատոր Ա, Վենետիկ, 1836, էջ 1032։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0074108

[1n.]

A-III  
5023